

21064

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱ-
ԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱԳԻՏ.-ՊՐՈՊ. ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 9.

Պրոլետարիատի բոլոր յերկրների, միացե՛ք:

Դ Ի Կ Շ Տ Ե Ց Ն

ՈՎ ԻՆՉՈՎ Ե == ===== ԱՊՐՈՒՄ

Գ. ԳԼԵԽԱՆՈՎԻ

Առաջաբանով

Թարգմ. ռուս. Գ. Տ. Ա.

33

Դ - 48

Տպ. Հենինականի Գալիքաղզ. Տեղ. Տնտ. բաժնի

03 APR 2013

15 JAN 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՈՐԴՅՈՒՆ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացնե՛ն

33

Դ-48

Ա/

Դ Ի Կ Շ Տ Ե Ց Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5 ՄԵԴԱԼ

ՈՎ
ԻՆՉՈՎ Ե ԱՊՐԻԼ

Դ. ՊԼԵԽԱՆՈՎԻ ԾՐԱԾԱՐԱԿԱՆԱՎ

Թարգմ. ռուս. Դ. Տ. Ա.



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և 102:

1924 թ.



21.06.9

ԱՐԱԳԱԲԱՆ*)

Ներկա գրքույթից գրված և լեհերեն և լեհ բանվորների համար՝ Այդ պատճառով կարող են ասել, վոր նրա մեջ գրվածը չի համապատասխանում ուսւ բանվորների գրությանը, և վոր ուսւ մարդիկ չպիտի կարդան լին «խորվարանների» գրած գրքերը։ Այսպիսի նկատողություն անելու ընդունակի մաստուճներ քիչ չեն՝ նյունիսկ գրքեր, լրագրեր և ամսաթերթեր գրող մարդկանց մեջ, դրա համար ել մենք ուզում ենք առաջուց մի քանի խոսք ասել դրա մասին։

Ամենից առաջ բանվորներին վայել չե և վոչ ել ձեռնտու, վոր թշնամաբար վերաբերվեն դեպի լեհական «խռովաբար-ները», ինչպես վերտարերվում են՝ թագավորը, վոստիկաններն ու աստիճանակիորները:

Թագավորին և զուր և զալիս, և ձեռնառ յե պահպանել կեհաստանի վրա եր իշխանությունը Ինչքան շատ նա հպատակներ ունենա, այնքան նա «հզոր ե», այնքան շատ հարկեր և հավաքում նրա գանձարանը, այնքան շատ հարգանք և վայելում հարեան թագավորներից:

Աստիճանավորները թագավորին ծառայում են փողով, «կամավոր վարձով» և հենց այդ պատճառով ել, նրանք պիտի պաշտպանեն իրանց տիրոջ շահերը։ Խոռվարաններին ճշնչելու ժամանակ ցույց տված յեռանդի համար թագավորը նրանց պարզեատրում ե՝ խաչերով, փողով և այն հողերով, վոր խլված են հողատերերից, թեկուզ վերջիններս ստացած լինեն այդ հողերը սրբնական ձանապարհով՝ ժառանգարար կամ փողով գնած, բայց այսպես թե այնպես խառն յեղած լինեն ապստամբության

^{*)} Զնայած վոր մարքսիզմի ուսուցիչ հանգուցյալ Գ. Պիխանտիկի այս առաջարանը գրվել ել տպագրվել 1885 և վեհ, այնուամենային մենք տպագրում ենք նորից, նկատի ունենալով նրա պատճական արժեքը յեթ այն, վոր մինչեվ աբսոր ել Պիխանտիկի շոշափած խնդիրներից վորմանք չեն կորցրել իրենց այժմյականությունը:

մեջ, Քիչ հողեր չըթալանեցին սուս աստիճանավորները Լեհաստանում:

Վոստիկանությունը հենց նըա համար գոյություն ունի, վոր միայն «զավթի ու ձեռքն ընկածը բաց չըթողնի». ասում է մի սուս գրող:

Այս բանվորները, վորոնք մասնակցել են գործադուլներն, իրանց վրա փորձած կըլինեն, թե ինչպիսի ուրախությամբ և վոստիկանությունը «հանդարտացրել վոչ միայն լեհ, այլև սուս բանվորներին, վոստիկանության համար «իսովարար և ամեն մի մարդ», վորը զեմ և վորեն անարդարության, գյուղացին, վորը յուած չի գնում կուլակի կամ կալվածատիրոջ հետ, բանվորը, վորը չի կամենում ցածր աշխատավարձով ծառայել. ինչպիս և լեհը, վորը ուղում և ազատել իր հայրենիքը—բոլորն ել խոռվարաններ են վոստիկանության աշքում:

Այս բոլորը հասկանալի յեւ Անհասկանալի յեւ միայն, թե լեհերի ճնշումից: Արդյոք, դրանով կարող և ավելանալ գյուղացու հողը, կամ դրանով կավելանամ գործարանի կամ մի ուրիշ ու տուրքերը: Ամենեին, Ընդհակառակը. հարկերն ավելանում են, քանի վոր լեհերին «հանգստացնելու» համար՝ զորք և պետք, իսկ զորք պահելու համար՝ փող և պետք, փողն ել կրկին նույն բանվորներից և գյուղացիներից և վերցվում: Այս, ինչ ձեռնուույթավորին և աստիճանավորներին, բանվոր ժողովրդին միայն վնաս և բերում:

Բայց սա դեռ բոլորը չեւ ինչքան մեր թագավորը շատ միշտ ունենա ուրիշ ազգերի ճնշելու համար, այնքան ավելի հարավորություն ունի նա իր սեփական ժողովուրդը ճնշելու:

Կարիք յեղած դեպքում, նա կարող և սուս ժողովրդի դեմ դուրս բերել այն զինվորներին և աստիճանավորներին, վորոնք սովոր են գրաված յերկրներում կոտորել թալանել ու կողոպտել: Սուս բանվորները պիտի հիշեն, վոր փոչ մի ժողովուրդ չի կարող ազատ լինել, մինչև վոր, նա չի դադարի ուրիշ ժողովրդին ճնշելուց:

Վոչ թե ատելություն, այլ համակրանք պիտի զարթեցնի մեջ ուրիշ ժողովրդի իր ազատազրվելու ցանկությունը՝ «Բունթը», (ապստամբությունը) հանցանք չեւ, այլ միծ և սուրբ գործ, յերբ մի առանձին զասակարդ կամ մի ամբողջ ժողովուրդ՝ բռնության դեմ՝ իր յերջանկության, ազատության և անկախության համար վոտքի յեւ կանգնում:

Բայց սա դեռ բոլորը չեւ Այս զբքույկը, վորը մենք առաջարկում ենք ընթերցողին, զրված և մի մարդու ձեռքով, վորը ձգտել և վոչ միայն Լեհաստանը ազատելու թագավորի ճնշումից, զա նրա համար շատ քիչ ե, այլև նա սոցիալիստ եր, ըի ճնշումից, զա նրա համար շատ քիչ եր, հողատերերի ճնշումից. նա հենց նրա հարի, ֆարբիկանտների, հողատերերի ճնշումից. նա հենց նրա հարի, վորմար ել գրել և իր զբքույկը, վոր պարզ բանվորներին, թե վորմար ել գրել և առաջ զալիս այնպիսի հասարակարգ, վորի ժամանակ տեղից և առաջ զալիս այնպիսի հասարակարգ, վորի ժամանակ տասնյակ, հարյուր հազարավոր մարդիկ, կանայք և նույնիսկ տասնյակի իրավուր մաշն ծանր աշխատանքով, վորպեսզի յերեխաններ պիտի իրանց մաշն ծանր աշխատանքով, վորպեսզի հարստացնեն վորեն մեկ գործատիրոջ: Կարգացեք այս զըրգույկը և գուք կըտեսնեք, վոր այսպիսի կարգերը Լեհաստանում առաջ են գալիս նույն պատճառներից, ինչ վոր Ռուսաստանում ե, իսկ յեթե պատճի նման զրքի ֆրանսերենից կամ գերմաներենից թարգմանությունը կարգաք, դուք կըտեսնեք, վոր նույն պատճառները գոյություն ունեն նույնպես Գերմանիայում և Ֆրանսիայում: Ինոր զարգացած յերկրներում բանվոր գասար կարգը տանջվում և միենույն պատճառներից, զըրա համար ել սոցիալիստները ցույց են տալիս, թե ինչ ձեռվ պիտի վերացնել այդ պատճառները, նրանց այդ ցուցմունքները հարմար և բոլոր զարգացած յերկրների համար:

Ինարկե, ամեն մի յերկրում կան տեղական հատուկ պայմաններ, բայց ամենապլիսավորը, բանվոր դասակարգի ազատվեարմատական միջոցը՝ ամեն տեղ միենույնն եւ: Ահա թե ինլու արմատական ժողոցը՝ ամեն տեղ միենույնն եւ: Մասամբ չու բոլոր յերկրների բանվորները պիտի ընդունեն են, և մասամբ դու բանվորների բանվորների լիակատար, վերջնական և բազմակողմանի ազատազրումը՝ այն ընդհանուր, մեծ նպատակն եւ, վորին հասնելու համար բոլոր յերկրների բանվորները պիտի միանան, մոռանալով այն տաելություններ ունեցող մարդիկ վորը ոտարալեզու և տարբեր սովորություններ ունեցող մարդիկ վորը հատուկ և միայն վայրենի անզարգացած ժողովրդներին:

Ժամանակ ե, վոր սուս բանվորները հրաժարվեն այդպիսի կոնսավաշարմունքներից, ժամանակ և արձագանք տալ այն կոնսավաշարմունքներից, ժամանակ և արձագանք տալիս արդեն չին, վորը բոլոր ժողովրդների մեջ ձայն և տալիս արդեն 1848 թվեց՝ Պրոլետարեներ *) բոլոր յերկրների, միացե՛ք:

*) Պրոլետար և կովում այն մարդը, վոր փոչ նոր ունի, վոչ աշխատանքի գործիքներ և վոչ կապիտալ, եվ ստիլված և իր բանվրակն ուժը ուրիշներին ծախել, բաղցեց լոմեննելու համար՝ ստիլված և գործատիրոջ մաս վարձու աշխատել:

Այժմ ընթերցողը տեսնում է, թե ինչու մենք անհրաժեշտ գտանք տպել այս գրքույկը։ Նա շատ լավ է գրված, և դա արդեն բավական է, վոր սոցիալիստական այս գրվածքը թարգմանվի ոռուսերեն, ինչպես և մի այլ լեզվով։ Թարգմանչունին ուզեց փոքր ինչ փոխել հեղինակի։ *) Գարզվածքները, ինկատի ունենալով ուրեմնեցողներին։ Այստեղ, ուր հեղինակը նկարագրելով ուրիշ յերկների բանվորների գրությունը, ավելացնում է, վոր այս «Ճիշտ այնպես և ինչպես լինաստանում», նա ուզում էր դնել «այնպես և ինչպես Ռուսաստանում», բայց դա մեզ ավելորդ յերկաց։ Ռուս բանվորը ինքն ել կըտեսնի, վոր իր գրությունը վոչչով լավ չե, յեթե միայն վատ չե ուրիշ յերկների բանվորների գրությունից։ Իսկ լին բանվորների ձախորդության մասին հաճախ խոսելը, անողութ չե նույնպես ոռուս բանվորի համար։ Նա մի ավելորդ անգամ կը իշեցնի վերջինիս, վոր ոռուս բանվորը լին բանվորի մեջ վոչ թե թշնամի պիտի տեսնի, այլ յերպայր։

Այժմ մի յերկու խոսք ել այս գրքույկի հեղինակի մասին։ Նրա անունն էր Սիմոն (Եհերեն Շիմոն) Դիկտուեյն։ Բայց այդ անունով նա չեր ստորագրում էր գրվածքները, այլ ինչպես այդ միշտ ել պատահում և գրողների մեջ, նա իրան համար ընտրեց մի ուրիշ անուն, կամ ծածկանուն։ Նա իրան անվանեց Յան Մլոտ (կամ Իվան Մլոտ—Հովհաննես Մլութ)։

Նա ծնվել է 1858 թվին Վարշավում, շատ աղքատ ծնողներից։ Մանկությունից նա աչքի յեր ընկնում մեծ ընդունակություններով։ Տասնընինդ տարեկան հասակում նա ավարտեց դիմուական և հինգ տարուց հետո ել արդեն ստացավ համալսարանի թեկնածվի աստիճանը։ Այդ ժամանակ արդեն նրա առաջ ձանապարհ բացվեց, յեթե վոչ դեպի հարստություն, գոնե, առնվազն, դեպի գիտնականի հանդիսաւ և ասպառով կյանքը։ Բայց դա նրան չեր գրավում միշտ հենց այն ժամանակ, յերբ նա ավարտեց համալսարանը, Վարշավայում բավական ուժեղացավ բանվորների մեջ սոցիալիստական պրոլետարանուն։

Դիկտուեյնը, կամ ուղղակի Դիկը (ինչպես սովորաբար անվանում եյին նրան նրան ընկերները) թողեց իր կենդանաբանությունը և ամբողջովին նվիրվեց բանվորական գործին։ Այդ բանը, ինարկե, նրա գեմ վոստիկանական հալածանք առաջացրեց, այնպես, վոր նա ստիպված յեղափ արտասահման փախչել։ Հնա-

*) Գրվածքի հեղինակը—այն մարդն է կոչվում, վորը գրի և այդ դրվածքը։

բավորություն չունենալով բանվորների մեջ անձամբ տարածելու սոցիալիստական գաղափարները՝ նա սկսեց գրել Գրում եր շատ և յեռանդով։ Թարգմանում եր սոցիալիստական գրքեր, կազմում եր սոցիալիստական ամսաթերթերի համար հոդվածներ, և, ի միջի այլոց, գրում է «Ով ինչով և ապրում» իր գրքույկը, և, ի միջի այլոց, գրում է «Ով ինչով և ապրում» իր գրքույկը, հացը ինքը պիտի վաստակեր։ Այստեղ ահա նրան ոգնեց իր հացը ինքը պիտի վաստակեր։ Այստեղ ահա նրան ոգնեց իր գրքույկը։ Նա թարգմանում էր գիտական գրքեր անգլիերեկը թությունը։ Նա թարգմանում էր գիտական գրքեր անգլիերեկը և այդ ձևով աշխատած փողով ել ապրում էր։ Մինչեւ ինչերեն և այդ ձևով աշխատած փողով ել ապրում էր կենդանաբանական գիտական աշխատանքներով և տպելու համար պատրաստում էր մի շատ լուրջ գրվածք։

Թվում էր թե այս գիտական, աղնիվ և շնորհալի յերիտասարդը գտել ե, ինչպես ասում են, իր կոչումը։ Նա սովորում էր զբաղվում իրան համար թանկագին գործով, իսկ դա այն ամենն էր, ինչ ինքն էր ուզում։ Բայց նրա բնավորության մեջ մի գիծ կար, վրբը չեր թողնում նրան հանգստանալ իր արածով։ Նա յերեք իրանից դոհ չեր։ Շատ մարդկանց մեջ այդ իրանից դժոն լինելը նոր հաջողությունների յի դրդում, նրանից դժոն լինելը նոր հաջողությունների յի դրդում, նրանը սկսում են ձգտել միշտ դեպի լավը, բարձրանում են, աղնվանում, ել ավելի լավանում։ Բայց Դիկտուեյնի մեջ այդ գիտական այնքան էր զարգացել, վոր նա հիվանդության փոխվեց։ Ըլ այնքան էր զարգացել, վոր նա հիվանդության փոխվեց։

Միշտ իրանից դժոն լինելով, նա դադարեց հավատալ իր ուժերին, դադարեց իր գրողի գործունեյությունը ողտակար համարել, իսկ առանց գործին ողտակար լինելով՝ ապրել նա չեր մարդ ել կարող։ Այդպիսի տրամադրության ազդեցության տակ, նա թույն ընդունեց և մեռավ 1884 թվի Հուլիսի 6-ին (ս. տոմ.) Եերն քաղաքում, վորտեղից նրան հետո թաղելու համար գլնկ փոխադրեցին։

Կարիք կա արդյոք, ասելու, վոր նրա վաղաժամ մահվան մասին խորը կերպով ցավեցին բոլոր նրանք, ովքեր գոնե քիչ ձանաշում եյին նրան։ Նրա մօրմինը գեպի գերեզմանատուն եյին ուղեկցում բազմազան ազդությունների սոցիալիստաները—Եհերն ու գերմանացիք, սուսներն ու ֆրանսիացիք արտասուքով գերեզման եյին իջեցնում աղնիվ և համեստ Դիկի դագաղը։ Մի ծեր բեզման եյին իջեցնում աղնիվ և համեստ Դիկի դագաղը։ Մի ծեր բերանսիացիք հեղափոխական հեկելում էր յերեխայի նման, կըրկնելով, վոր նա սիրում էր նրան վորդու պիս։ Այսպիսով լինական սոցիալիստական կուսակցությունը զրկվեց մի ողտակար

գործից: Բայց մենք կարծում ենք, վոր կարդալով այս գրքույշը սուս բանվորները նույնպես հարգանքով կը հիշեն սրա հեղինակի անունը: Այնպիսի մարդիկ, ինչպես Դիկտույնն եր, չեն ապրում իրանց համար, այլ նրանք ապրում են բանվոր դաստկարդի յերջանկության համար: Ահա թե ինչու բանվորները սրբությամբ պիտի պահեն նրանց հիշատակը:

ԺՄՆԵՎ, 20 Մարտի 1885 թ.:

Գ. ՊԼԵԽԱՆՈՎ

ՈՎ. ԻՆՉՈՎ. Ե ԱՊՐՈՒՄ

«Ամեն մարդ ապրում է իր աշխատանքով»... Ճիշտ

Կ արդյոք:

Առաջին հայացքից իսկապես ճիշտ կթվա: Միայն աշքի անցընկը, թե ինչքան է գրվել ու խոսվել լրագրերում ու թերթերում, գրքերում ու նույնիսկ յեկեղեցական քարոզներում: Ու այդպիսով միթե շատերին չի թըփում, վոր իսկապես, կոչկակարն ապրում է իր կոշկակարական աշխատանքով, դերձակը՝ դերձակի, ուսուցիչը՝ ուսուցչական, վոր յուրաքանչյուր գործարանատեր նույնպես աշխատում է, յեթե վոչ ձեռքերով գոնե գլխավ: Բայց իսկապես, այդպես է արդյոք:

Արդյոք ամեն մի մարդ իր աշխատանքնիվ է ապրում:

Դուք գուցե զարմանաք, յեթե ասեմ, վոր վոչ մի մարդ չի ապրում իր սեփական աշխատանքով, և վոչ միայն գործարանատերերն ու վաճառականները, այլև ամբողջ բանվոր ժողովուրդը:

Յեթե, որինակ. կոշկակարը վոչ միայն կոշկիներ կարեր, այլ և մի կտոր հող ունենար, վորի վրա հացահատիկ ցաներ, բանջարեղեն տնկեր. յեթե ինքը գործեր ու կարեր իր հագուստը. յեթե, մի խոսքով, ինչ վոր հարկավոր է իրան, ինքն իր տանը մշակեր, այն ժամանակ միայն, մենք իսկապես կարող ենինք ասել, վոր նա ապրում է իր աշխատանքով:

Յեկ իսկապես, հին ժամանակներում, մի քանի հարյուր տարի սրանից առաջ, յերբ ամեն մի քաղաք բավա-

կանաչափի հող ուներ և ամեն մի արհեստավոր, վորպես
այդ քաղաքի բնակիչ, իրավունք ուներ ոգտվելու այդ հո-
ղից, այդ ժամանակ արհեստավորները պատրաստում ե-
րին այն ամենը, ինչ վոր իրանց հարկավոր եր, և ազրում
երին իրանց սեփական աշխատանքով:

Բայց այժմ, ինչպես հայտնի յե, այդպես չե: Արհե-
տավորը իր սեփական հողը չունի, և կոշկակարը, որինակ,
կարող ե միայն իրա կոշիկները կարել և ուրիշ գոշնչ:
Իսկ կոշիկներով չես կշտանալ, նրանց հագուստի տեղ ել
չի մնի բանեցնել: Նույնը կարելի յե ասել գերձակի,
հյուսնի, քարտաշի մասին և այն: Դերձակը չի կարող
իր կարած շորը վոչ ուտել, վոչ խմել: Քարտաշը ճաշի ժա-
մանակ չի կարող ուտել իր քարերը:

Ավելի շուտ գյուղացին ե, վոր մեղանում կարող և
ասել թե իր աշխատանքովն ե ապրում: Նա գոնե իր
տանը հաց, կաթ յերբեմն նաև հագուստ ե արտադրում,
թեև հագուստը վերջին ժամանակներս արդեն հազվագյուտ
գեպքերում ե գյուղացին արտադրում, քանի վոր շուկայի
շորը ել ավելի սիրուն ե ու ել ավելի լավ:

Իսկ շատ յերկրներում նույնիսկ՝ գյուղացիք ել տանը
չեն պատրաստում այն ամենը, ինչ հարկավոր ե նրանց
առորյա ապրուստի համար: Նրանցից վոմանք զինի յեն
պատրաստում, մյուսները՝ կտավատ են ցանում, յեր-
որդը՝ միայն բանջարեղեն և մշակում և այն, իսկ ան-
հրաժեշտ հակուստեղենը և ուտելեղենը, նրանք գնում են
շուկայից:

Եւկ այդպես, գուք տեսնում եք, վոր վոչ վոք, կամ
համարյա վոչ վոք, իրավունք չունի ասելու, վոր ինքը
սեփական աշխատանքով ե ապրում. կոշկակարը ապրում
ե գերձակի, քարտաշի, հյուսնի, գյուղացու աշխատանքով:
գերձակը՝ կոշկակարի, հյուսնի, քարտաշի աշխատանքով և
այն: Մարդիկ բոլորն ել չեմ ապրում իրենց աշխատանքով,
այլ ապրում են ուրիշի աշխատանքով:

Բայց չե՞ վոր նրանցից յուրաքանչյուրն աշխատում ե,

կպատասխանեք դուք, նրանցից ամեն մեկը վոչինչ չեր
ունենա, յեթե չափատեր:

Դա ճիշտ է, հենց դրա համար ել մենք չենք ասի,
վոր մարդիկ բոլորն ել ապրում են սեփական աշխատան-
քով, այլ կասենք, վոր նրանք սեփական աշխատանքով են
պահում իրանց:

—Բայց միթե մինույնը չե՞ ապրել իր աշխատան-
քով կամ նրանով իրան պահել: Վոչ, մինույնը չե, և
ահա թե ինչն: Յեթե կոշկակարը, զերծակը, հողագործը
և մնացած այլ մարդիկ իսկապես ապրելին իրանց աշխա-
տանքով, յեթե ինչպես այդ առաջ եր, նրանք իրանց հա-
մար անհրաժեշտ բոլոր բաները տանը պատրաստելին,
այդ ժամանակ նրանցից յուրաքանչյուրը կարող եր հա-
մոզված լինել վոր թեև նրա դրությունը մեշտ ել միա-
տեսակ չի լինի, բայց քաղցից նա չի մեռնի և մի կերպ
«յոլա կդնա», այն ինչ, այժմ կոշկակարը կարում ե մի-
այն կոշիկներ, նա դրանցից պատրաստում ե այնքան,
վորքան կարող ե հետո ծախել, ինչպես յուրաքանչյուր մի
ապրանք: Լավ ե, յեթե առնող ծարվեց. կոշկակարը
կծախի կոշիկները և ստացած փողով կառնի ինչ ինրեն
պետք ե: Իսկ յեթե չծախվեց: Ինչ կանի այդ գեպքում:
կարող ե արդյոք կերպարել յերեխաներին իր կոշիկներով:
կարող ե նրանով վճարել իր հարկերը: Կարող ե վերա-
դարձնել նրանցով վաշխառվին, կամ բանկերին իր պարո-
քերը և այն:

Հիմա տեսնում եք, վոր պահել իրան սեփական աշ-
խատանքով, և ապրել սեփական աշխատանքով մինույն
բանը չե:

Քանի մարդիկ բոլոր պետքական բաներն իրանց տա-
նըն եյին պատրաստում, քանի իրանց ապրանքով քիչ ե-
յին ծախում, մինչև այդ կարելի յեր ասել վոր նրանք
ապրում եյին իրանց աշխատանքով, բայց այն ժամանակ-
ապրում վանից, յերբ մարդիկ սկսել են պատրաստել կոշիկներ,
վանից, յերբ մարդիկ սկսել են պատրաստել կոշիկներ,
կողաքներ,

համար. նրանք տանը իրանց կարիքների համար սկսել են քիչ աշխատել և ավելի յեն աշխատում ուրիշների համար: Յեվ այժմ, Վարշավայի կողկակարը սկսել ե կողիկներ կարել ոռւս արհեստագորի համար. ոռւս ջուրհակը սկսել ե դազգահի առաջ աշխատել Վարշավայի կողկակարի համար. ամերիկացին հաց ե պատրաստում անգլիական բանվորի համար. անգլիական բանվորները յերկաթից ու պողպատից շինած գործիքներ են մատակարարում Վարշավայի բանվորներին: Հետեապես, այն ժամամակից, յերբ սահմանվեց արտադրության զանառքը—վոչ վոք չի ապրում իր սեփական աշխատանքով, այլ բոլորն ել ապրում են ուրիշ աշխատանքով:

1

Լավ։ Վոչ վոք, ուրեմն, չի ապրում իր աշխատանքով, այլ պահում է իրան իր աշխատանքով։ Դա արդեն անկառ-կածելի ճշմարտություն պիտի լինի։

Բայց, սա ել բոլորովին ճիշտ չե։ Շատ բան կարելի յե դրան ավելացնել։ Բայց առայժմ ընդունենք, վոր այն բանի մեջ, վոր բոլորն ել իրանց պահում են սեփական աշխատանքով, մեծ չափով ճշմարտություն կա։

Բայց ինչու հատկապես աշխատանքով, վարովիետե
յերբ մեկը ծախում ե իր շինած ապրանքը, կոշիկ լինի
դա թե հագուստ, ամանեղեն թե դասակներ. նրա ապրան-
քը գնահատվում է նրա աշխատանքով, և նրա աշխատան-
քի համապատասխան վճարում են նրան. Բացատրենք դա
ավելի մանրամասն կերպով: Դիցուք, կոշկակարը իր կա-
րած կոշիկների համար ստանում է 10 արշին քաթան,
Այս յենթադրության մեջ անսովոր վոչինչ չկա. աշ-
խատեց, ու դրա փոխարեն ստացավ քաթանը: Բայց մի
ըստե յերկակայեցեք, վոր աշխարհիս վրա մի այնպիսի
բախտավոր յերկիր կա, ուր կոշիկները յերկնքից են թափ-
վում: Այդպիսի յերկիր, իհարկե, չկա, բայց յեթե լինի,

բնչ եք կարծում, շատ կվճարեյին արդյոք, այդ յերկ-
րում կոշկակարին իր կարած կոշիկների համար:
Իհարկե, վոչ: Մարդիկ կասեյին, վոր կոշիկների հա-
մար վոչինչ պետք չե վճարել, վոր նրանց վրա աշխա-
տանք գործ չի դրված և վոր, հետեւալես ով ուղենա, կո-
շիկ կարող ե ունենալ: Մեր կոշկակարը, վորպեսզի ըստ-
ցից չմեռնի, ստիպված պիտի լիներ ուրիշ աշխատանքի
դիմել: Թեև մեզանում կոշիկները ծառերի վրա չեն բու-
նում, բայց կան այնպիսի շատ բաներ, վորոնց համար
վոչինչ չի կարելի ստանալ, վորոնք վոչինչ չարժեն միմի-
այն նրա համար, վոր նրանց վրա չեն աշխատել: Վոչ
աղքրի ջրի համար, վոչ ել գետի ավաղի համար՝ վոչ վոք
վոչինչ չի վճարում, վորովհետեւ պետք չե աշխատանք
թափել նրանց ձեռք բերելու համար, վորովհետեւ նրանք
պատրաստ ելին՝ նախքան նրանց վրա մարդկային աշ-
խատանք գործ դնելը:

Բայց, քանի շատ ե առարկան իր մեջ մարդկային
աշխատանք պարունակում, այնքան ավելի շատ ե նրա
արժեքը, այսինքն ավելի շատ կտան նրա համար։ Մի ար-
շին քաթանի համար ավելի շատ կտան, քան մի արշին
հասարակ կտավի համար։ Ինչու. փորովհետև մի արշին
հասարակ կտավը ավելի շտու ե պատրաստվում, փորով-
հետև նրա վրա ավելի քիչ աշխատանք ե գործ դրվում,
քան մի արշին քաթանի վրա։ Վոսկե շղթան թանգ ե պող-
պատե շղթայից։ Ինչու. նրա համար արդյո՞ք, վոր վոս-
կին ավելի լավ ե փայլում, կամ նրա համար, վոր նա ա-
վելի ծանր ե։ Վոչ, պողպատե շղթան կարող ե փայլել և
կարող ե կշռել նույնքան, վորքան և վոսկունը, բայց վոս-
կին ավելի դժվար ե ձեռք բերվում, շատ աշխատանք ե
պետք նրան հողից հանելու համար։ Հետեւապես և վոսկե
շղթան ավելի շատ աշխատանք ե պարունակում իր մեջ,
քան պողպատինը։

Այդ եպատճառը, վոր յերբ արհեստավորին՝ կոշկակարին, դերձակին, կամ հացթուխին վճարում են կոշկե-

ների, բամկոնի կամ հացի համար, — իրոք վճարում են այն աշխատանքի համար, վորը կա այդ կոշիկների, բամկոնի կամ հացի մեջ։ Յեթե մի հատ հաց պատրաստելու համար մի ժամ ժամանակ հարկավորվի, իսկ մի զույգ կոշիկներ կարելու համար՝ տասը ժամ, այդ դեպքում մի զույգ կոշիկների համար կարելի յեւ ստանալ 10 հաց, քանի վոր այն աշխատանքը, վորը պարունակում եւ կոշիկների մեջ (կամ ինչպես ասում են կոշիկների արժեքը) տասն անգամ ավելի յեւ այն աշխատանքից, վորը պարունակում եւ հացի մեջ (կամ հացի արժեքից *):

Յեթե մի արշին մահուղի համար վճարում են արծաթ մանեթանոց, այդ նրանից եւ, վոր մահուղ պատրաստելու համար (այսինքն՝ վոչխար պահելու, խուզելու, մահուղը ներկելու համար), հարկավոր եւ նույնքան աշխատանք, վորքան և արծաթ մանեթանոց շինելու համար (արծաթ գտնելը, նրան վոխարինելը, ձուլելը և այլն), որինակ՝ տասը ժամ։ Մի արշին հասարակ կըտափի համար վճարում են միայն տասը կոպեկ, վորովհետեւ կտափը պատրաստելու համար (բամբակը ցանելու, գործելու, ներկելու) պետք եւ վոչ թե տասը ժամ, այլ միայն մի ժամ։

Ահա թե ինչու կարելի յեւ ասել ու զրել, վոր կոշկակարը, դերձակը, հյուսնը, վականագործն ու ընդհանրակես աշխատափորը պահում եւ իրան իր աշխատանքով, Դրանք բոլորն ել զանազան իրեր են պատրաստում, այդ իրերը, ինչպես ապրանք, ծախու յեն հանգում և դրանց համար վճարում են այնքան, վորքան դրանք աշխատանք են պարունակում իրանց մեջ։

Այդպես ուրեմն, վորքան վորեն աշխատափոր շատ եւ աշխատում, վորքան նա իր ապրանքի մեջ շատ աշխատանք եւ դնում, այնքան նա իր աշխատանքով ավելի ար-

*) Եթե վոր ձեզ հայտնեցին ինչ երաժակի, կոշիկների, շորի, արժեքը վուր կարող ելիք պատասխանել, վոր այդ արժեքը բաժակի, կոշիկների կամ շորի վրա դրած դրանց մեջ պարունակուղ աշխատանքն եւ,

ժեք եւ դնում նրա մեջ, այնքան ավելի նա շատ կստանած ախելու ժամանակ, այնքան ավելի գին կտան նրա ապրանքին։

— Այս, տեսնում եք, — կարող են այժմ ասել ինձ, — դուք առաջ ուզում ելիք ասել, վոր Փաբրիկանսներն ու դործատերերը մի բան մեղանից ծածկում են, իսկ այժմ ինքներդ եք ասում այն, ինչ վոր նրանք են մեզ ասում. այն եւ ով շատ եւ աշխատում, նա ել շատ եւ ստանում: Բայց սպասեք, մի շտապեք ձեր հանդիմանություններով, այլ լսեցեք ինձ: Վերեսում յես ասացի, թե քանի շատ եւ արհեստավորն աշխատանք դնում իր ապրանքի մեջ, այնքան շատ ել նա ստանում եւ: Կոշկակարը լավ պատրաստած՝ կրկնակի տակելով (ներբաններով) կոշիկների համար ավելի շատ կստանա, քան վատ կարածի համար: Այդ բովելի շատ կստանա, քան վատ կարածի համար: Սակայն միշտ կոշկակարը կարողանալու հիշտը ներկներ (կողպեքներ) շինել, նույնպես պիտի արհեստանոց վարձի, գործիքներ գնի, վորոշ ժամանակ ապրի, մինչև վոր կծախի իր շինած փականները: Իսկ դրա համար ել դարձյալ վոր եւ պետք: Ով վոր ունի, նրան ինչ նա արհեստանոց ել կպատրաստի, ապրանք ել կշինի և հեշտությամբ կսկսի ծախել այդ ապրանքը իրանց արժեքի համեմատ, այսինքն համապատասխան այն աշխատանքին, վոր գործ եւ զրված նրա վրա: Բայց ինչ անի նա, ով վոր չունի, ով չի կարողանում ապրանք պատրաստել բաց համար, չի կարողանում ապրանք պատրաստել զրած համար չունենալով վոչ նյութ և վոչ գործիքներ: Ինչ անի այն մարդը, ինչպես դա շատ անգամ պիտի հագնի:

Մեր աշխատափորը վոր չունի, չունի նաև ապրանք.

հետևապես ուտելու համար նա պիտի իրան ծախի, պիտի ուրիշի մոտ վարձով աշխատի:

— Ինչպես թե «իրան ծախի», «ստրուկ դառնա»:

ԶԵ վոր գործարանում աշխատելը, կամ վարպետի մոտ վարձվելը՝ դեռ ստրկություն չե: Թե արհեստավորը և թե գործարանի բանվորը—ազատ մարդիկ են, աշխատում են՝ ում մոտ վոր ուղում են և ինչքան ուղում են և վոչ վոք իրավունք չունի նրանց հրամայելու:

Այն մարդը, վորը ծախում ե իր աշխատանքը, ազատ լինել չի կարող, նա պիտի տեր ունենա, և իսկապես նա ունի տեր: Ազատ են միայն այն մարդիկ, վորոնք կարիք չունեն իրանց ծախելու: Իսկ այդպիսի ազատություն հիմա շատ դժվար է ձեռք բերել: Բանվորը գործարան ե գնում, վորովհետեւ պիտի զնա, քանի վոր սեփական նյութ ու գործիքներ չունի: Նա հնադանդվում է գործարանատիրոջը, վորովհետեւ գործարանատերը ունի մի ուժեղ ոգնական՝ սովը, վորը սպառնում է բանվորին գործազրկության դեպքում:

III.

Ստրուկ և թե ստրուկ չե, դա միևնույն բանն ե, կառարկեք դուք ինձ: Բանը նրանում չե, թե ով ե ստրուկ և ով ե ազատ մարդ, այլ բանը նրանումն ե, թե արդյոք ճիշտ ե, վոր ամեն մարդ կարող ե սեփական աշխատանքով հարստություն ձեռք բերել: Դարձյալ յես ձեզ կասեմ: մի շտապեք, դրան ել մենք կը հասնենք, պետք ե ամեն ինչ քննել ինչպես հարկն ե:

Յուրաքանչյուր բանվոր՝ փականագործ լինի դա, թե հյուսն, դերձակ լինի թե կոշկակար, իրան ծախելու յե գնում, յեթե միայն վոչ փող ունի, վոչ արհեստանոց և վոչ գործիքներ՝ տանն աշխատելու համար: Վաղ թե ուշ նա գտնում է գործարանատեր կամ մի վարպետ, վորը նրան գնում ե (առնում ե):


Իսկ ինչու յե նա նրան գնում: Արդյոք նա խղճնում ե նրան, և ուզում ե ոգնած լինի նրան՝ նեղ որին: Վա՞չ, գնում ե նրան, իմանալով, վոր աշխատավորը գիտե և կարող ե կառավարել դազգահը, բանեցնել մուրճը, կարել կաշին, մի խոսքով, վորովհետեւ նա կարող ե աշխատել:

Գնելով նրան, վարպետը կամ գործարանատերը մտածում ե միմիայն նրա ույժի և կարողության մասին: Յեթե աշխատավորը այդ ույժը չունենար, գործարանատերը ձրի նրան չեր վերցնի: Նրան միայն բանվոր ուժ ե պետք: Ամբողջ հարցը նրանումն ե, թե ինչքան վճարի այդ բան վորի ուժի համար—ահա ամբողջ ինդիքը: Դըմվար չե հասկանալ, թե վորքան պիտի վճարել մի բաժակի, մի կողովի, մի զույգ կոշիկի համար և այլն: Դա վորոշ վում ե աշխատանքի այն քանակով, վորը գործադրված ե այդ իրերը պատրաստելու համար:

Յենթաղբենք, վոր մի բաժակ պատրաստելու համար կես ժամ աշխատանք ե գործադրված, մի զույգ կոշիկի համար՝ տասը ժամ, մի հատ ափսեյի համար՝ 1 ժամ: Յենթաղբենք նույնպես, վոր աշխատանքի մի ժամի համար սովորաբար վճարում են 10 կոպեկ (վորովհետեւ արծաթի տաս կոպեկանոցի մեջ ել մի ժամիվ աշխատանք). դժվար չե հիմա գտնել, թե ինչ արժե բաժակը: Յեթե նրա վրա կես ժամ աշխատանք ե գործ գրված, դա նշանակում ե, վոր նա արժե տասը կոպեկանոցի կեսը, այսինքն՝ 5 կոպեկ. յեթե կոշիկների համար զնացել ե 20 ժամ, նրանք արժեն ուրեմն 20 հատ ատասը կոպեկանոց, այսինքն՝ 2 ըուբլի. յեթե ափսեյի վրա գործադրված ե 1 ժամ, նա արժե 10 կոպեկ:

Բայց ինչպես վորոշել, ինչ արժե մարդո, վորքան վճարել նրա ուժի համար:

Յենթաղբենք, վոր բանվորը, այսինքն նրա բանվորական ուժը գնում ե մի որվա համար: Յենթաղբենք այնուհետեւ, վոր այդ բանվորը ապրելու և աշխատելու համար, իր բանվորական ուժը պահպանելու համար որա-



կան պիտի ստանա 60 կոպեկ, վորը նա ծախսում է (ուտելիքի, բնակարանի, հագուստի և ուրիշ պետքերի վրա), վորպեսզի վերականգնի իր ուժերը։ Այդ գեղքում, մենք կարող ենք ասել, վոր բանվորական ուժը արժե 60 կոպեկ կամ 6 ժամվա աշխատանք (յեթե տասը կոպեկանոցը նույն գինն ունի ինչ 1 ժամվա աշխատանքը*)

Դործարանատերը շատ լավ գիտե, վոր բանվորական ուժը արժե աշխատանքի 6 ժամին, այսինքն՝ այնքան, վորքան արժեն 9 ափսեն կամ 12 բաժակը, և այդ պատճառով վճարում է բանվորին նրա ուժի համար ինչպես 60 կոպեկ արժեցող ապրանքի համար։ Այդպես ուրեմն. բանվորը միշտ ել ստանում է իր բանվորական ուժի համար այնքան, վորքան նրան պետք է իր սուղ ապրուստի համար։

Այժմ, մի անդամ ել վերադառնանք մեր հարցին. ինչու ե գործարանատերը գնում բանվորի ուժը։ Ինչու ե բանվորը ծախսում իր ուժը—դա հասկանալի յե. նրան դըլում ե սովը, վորն ավելի ուժեղ ե յուրաքանչյուր մարդու մեջ՝ նույնիսկ բնածին ազատության զգացմունքից և ամոթից։

Այսպես ուրեմն, ինչու յե գործարանատերը գնում բանվորների ուժը։ Զվարճության համար։ Վոչ չապահնչու համար։ Նրա համար, վորպեսզի ոգուտ ստանա։

Պարզենք այդ որինակով։ Յենթադրենք, վոր մեկը բամբակի թելի մի գործարան ե բացել. Ըստունենք, վոր բամբակին տվել ե նա 1400 սուր., մեքենաներին՝ 80 սուրի, գաղին և այլ ծախսերի համար վճարել ե 24 սուրի, և ասլա գործարանն արդեն սկսել ե գործել. Ի՞նչ եք կարծում, ինչու յե գործարանատերը գործարան բացել։ Պարզ ե, նրա համար, վոր նա կամե-

*) Պիտի հիշել, վոր բանվորական ուժի արժեքը հավասար ե աշխատանքի նույնչափ ժամերի, վորչափ հարկափոր ե բանվորի կյանքը պահպանիու համար։

նում ե իր թելը ավելի թանգ ծախել, քան վճարել ե նա բամբակին, մեքենային և այլն։ Պարզ ե, վոր նա յեթե բամբակից մանած ստանա, նա այդ մանածը չի ծախիր բամբակից մանած ստանա, նա այդ մանածը չի ծախիր բամբակից մանած ստանա, որինակ ստանալ 2000 մի 1504 սուրլով, այլ կուղենա որինակ ստանալ 2000 սուրլի*), Բայց դեռ հերիք չե ուղենալ պիտի իսկապես 2000 սուրլի ստանալ, իսկ այդքան արդյոք կստանա. դա դեռ հարց ե։

Յեթե մի այնպիսի հրաշք կատարվեր, վոր մեքենաները բամբակից թել մանելին՝ առանց բանվորների ոգնության, և յեթե մեր գործարանատերը տաներ իր թելը մի վաճառականի մոտ և կամենար ստանալ 2000 սուրլի, վաճառականը ուղղակի նրան այսպես կասեր. քո թելի մեջ կա ամենից առաջ բամբակի արժեքը, այսինքն՝ 1400 սուրլի, այնուհետև մեքենաների արժեքը՝ կամ 80 սուրլի և վերջապես, ածուխի, գաղի և այն՝ 24 սուրլի, ընդունալ նրա արժեքն և 1504 սուրլի, վոչ ավել և վոչ պակաս և զրանից ավել՝ վոչ մի զրոշ քեզ չեմ տա։

Զգիտենք, դուք կզար արդյոք գործարանատիրոջը այդպիսի պատասխանը։ Գիտենք միայն, վոր մինչև այժմ մեքենաները ինքն իրանց չեն կարող աշխատել, և վոր գործարանատիրոջ բաղդից մեքենաների մոտ պիտի մարդ աշխատի։ Իմանալով այդ, գործարանատերը վարձում ե. որինակ, 100 բանվոր և նրանց բանվորական ուժի համար, ինչպես վորեւ ապրանքի՝ վճարում ե որական 60 կոպեկ։

Որական 60 կոպեկով վարձված բանվորը մաքրում ե բամբակը, կարժում ե, կծիկներ ե պատրաստում և այլն։ Մի խուզով աշխատում ե՝ բամբակի վրա յե գործադրում իր աշխատանքը։

Առաջին ժամից հետո, նա միայն մի ժամվա աշխատանք կղնի նրա մեջ, կամ նրա արժեքը կբարձրացնի 10

*) 1504 սուրլին այս որինակում նրա ծախսերի ընդհանուր զումարն ե՝ 1400 ս. արժեքը բամբակը, 80 սուրլի մեքենաները, 24 սուրլի գաղի յեկ այլն, ընդհանը 1504 սուրլի։

կոպեկով, (յեթե աշխատանքի ժամը 10 կոպեկ արժե), յերկու ժամից հետո, դնելով իր աշխատանքի մի մասը, նրա արժեքը կբարձրացնի 20 կոպեկով, 3 ժամից հետո, նա յերեք ժամվա աշխատանք կդնի կամ կբարձրացնի արժեքը 30 կոպեկով և այլն: Վերջապես վեց ժամվա աշխատանքից հետո արժեքը կբարձրացնի 60 կոպեկով. ուրիշ խոսքով, ճիշտ նույնքան, վորքան գործարանատերը կվճարի նրան նրա բանվորական ուժի համար: Այդպես ուրեմն, վեց ժամվա աշխատանքից հետո բանվորը աշխատած կլինի իր ստանալիք վարձը: Այդպես աշխատում և նա ամբողջ մի շաբաթ, վորից հետո գործարանատերը կվերցնի իր թելը և շուկա կտանի կամենալով կրկն 2000 ռ. ստանալ:

—Ի՞նչքան ես ուզում մանածիդ համար:—2000 ռուբլի:—ասում ե գործարանատերը:—Դա չափազանց շատ ե: Միթե դու կարծում ես, վոր մանածիդ մեջ 2000 ռուբլու արժեք կա. վորտեղից, հաշվենք միասին. մանածի մեջ բամբակի արժեքը՝ 1400 ռուբլի, մեքենաներինը՝ 80 ռուբլի, ածուխի և գաղի արժեքը՝ 24 ռուբլի և բանվոր ուժի արժեքը՝ 360 ռուբլի (յեթե մի շաբաթվա ընթացքում աշխատել են 100 բանվոր, վեց որ, որական վեց ժամ և ժամը 10 կոպեկ վարձատրությամբ՝ $6 \times 6 \times 100 \times 10 = 360$ ռուբլի) ուրիշ խոսքով, թելիդ մեջ կա 1864 ռուբլու արժեք: Կարող եմ ուրեմն, տալ 1864 ռուբլի և վոչ մի գրոշ ավելի:—Ինչպես թե: Ուրեմն յես վոչինչ չը շահեցի: Հետո յես ծախսել եմ 1864 ռուբլի, բայ ուրեմն յեկամուտը: Ել ի՞նչու յեյի գործարան բացում. ի՞նչ տվեց նա ինձ:

Իսկապես յեկամուտ չեր լինի, յեթե մեր գործարանատերը իւելքի չընկներ. իր աշխատավորներին վեց ժամվա աշխատավարձով պահել գործարանում՝ ավելի յերկար ժամանակ աշխատելու:

—Բայց ի՞նչպես, կարող եյին ասել բանվորները գործարանատիրոջը:—դու ստիպում ես մեղ աշխատել ավելի

յերկար, չե վոր մեզանից յուրաքանչյուրը արդեն աշխատել ե իր վարձի չափով: Զե՞ վոր մենք արդեն ավելացրել ենք բամբակի վրա այնքան չափով արժեք, վորքան արժե մեր բանվորական ուժը:

—Յես ձեր բանվորական ուժը գնել եմ ամբողջ որով և վոչ թե 6 ժամով և կարող եմ ոգտվել ձեր աշխատանքից ամբողջ որը:

Իսկ բանվորները, վորոնք 6 ժամվա աշխատանքից հետո պիտի թողնեյին գործարանը և գնային հանդստանալու, կամ իրանց համար աշխատալու ավելի յերկար են մնում և աշխատում են կրկն 6 ժամ:

Գործարանատերը նոր նյութ և տալիս և գործը կարգի յե ընկնում: Բանվորները իրանց աշխատանքի յուրաքանչյուր ժամից հետո, այդ նոր բամբակին ավելացնում են նոր արժեքը և 6 ժամվա աշխատանքից հետո, նրանցից յուրաքանչյուրը ավելացրած կը լինի 6 ժամվա արժեքը:

Հասկանալի յե, վոր այդ նոր արժեքն արդեն վոչինչ չարժե գործարանատիրոջ վրա, նա միանգամայն ձրի յե: Մի բանվոր աշխատելով 6 ժամ, ավելացնում ե այդպիսով* 6 $\times 10$ կոպեկ (յեթե աշխատանքի մի ժամը արժե 10 կոպեկ) կամ 60 կոպեկ. հարյուր բանվոր, մի որում, հատպեկ) կամ 60 կոպեկ. հարյուր բանվոր, մի որում, հատպեկ) կամ 60 ռուբլի կամ 60 ռուբլի, իսկ մի շաբաթում, ըլուր անդամ ավելի կամ 60 ռուբլի, կամ մի շաբաթում, աշխատելով 6 որ, կավելացնեն վեց անդամ ավելի, կամ նոր արժեքից 360 ռուբլի:

Յեթե այժմ արդեն մեր գործարանատերը կամենա վաճառել իր մանվանձքի այս մասը*), ի՞նչքան կըստանա նա դրա համար: Պարզ ե, վոր կրկն 1864 ռուբլի, բանի վոր մանվաճքի մեջ պիտի պարունակվի նոր բամբակի արժեքը՝ 1400 ռուբլի, նոր մեքենաների արժեքը՝ 80 ռուբլի, ածուխի ու գաղի արժեքը՝ 24 ռուբլի և վերջապես 3600 ժամ աշխատանքի արժեքը, վորը նա բանվորներից ձրի յե ստացել.

*.) Այսինքն այն մասը, վորը հավելալ ժամերին և պատրաստված:

Այժմ արդեն, գործարանատերը ուրախությամբ կըտա
իր մանվածքը այդ գնով, քանի վոր նրա վրա նստել
է վոչ թե 1864 ռուբլի, այլ միայն 1504 ռուբլի (1400
ռուբլի բամբակի համար, 80 ռուբլի՝ մեքենաների, 24
ռուբլի՝ ածուխի և գազի. $1400+80+24=1504$ ռուբլի):

Այժմ արդեն պարզ է, վոր արտադրությունը յեկա-
մուտ և բերել: Հիմա մենք վերջնական հաշիվ տեսնենք:

Մեր գործարանատերը բամբակին տվել է յերկու
անգամ 1400-ական ռուբլի, այսինքն՝ 2800 ռուբլի. յեր-
կու անգամ 80-ական ռուբլի մեքենաներին, այսինքն 160
ռուբլի. յերկու անգամ 24-ական ռուբլի ածուխին և գա-
զին, այսինքն՝ 48 ռուբլի և վճարել է բանվորներին 360
ռուբլի. կամ թե ընդամենը նա ծախսել է 3368 ռուբլի
($2800+160+48+360=3368$), իսկ կըստանա նա ման-
վածքի առաջին մասի համար նույնպես 1864 ռուբլի և
յերկրորդ մասի համար նույնպես 1864 ռուբլի, կամ ամ-
բողջ մանվածքի համար 3728 ռուբլի ($1864+1864=3728$
ռուբ.), ուրեմն նա 360 ռուբլի ոգուտ ունի. ($3728-$
 $3368=360$):

Իսկ վճրտեղից վերցվեց այդ ոգուտը: Պարզ է, վոր
նա գոյացավ այն պատճառով, վոր գործարանատերը վո-
չինչ չըվճարեց իր աշխատավորներին որվա յերկրորդ կե-
սի համար, վորովհետև բանվորները իրանց աշխատանքի
յերկրորդ կեսը նրան ձրի տվեցին, վորովհետև բացի աշ-
խատանքի 3600 վճարված ժամերից, բանվորները բամբա-
կի արժեքին ավելացրին կրկին 3600 չըվճարված հավել-
յալ աշխատանք, ինչպես ասում են՝ 3600 ժամ հավելյալ
արժեք:*)

Հիմա մենք գիտենք, թե ինչու յե գործարանատերը
բանվոր վարձում: Վորպեսզի նրանց աշխատանքից նա յե-

*) Հնունվագեն, ի՞նչ բան է հավելյալ արժեքը: Դա այն արժեքն է,
վոր աշխատավորները ավելացրին իրանց արտադրած ապրանքին արդին այն
ժամանակից հետո, յերա նրանք աշխատել ենին իրանց բանվորական վարձի
ափով:

կամուտ ունենա, վորպեսզի նրանցից հավելյալ արժեք
ստանա: Ուրեմն գործարանատերը իր յեկամուտը ստա-
նում է բանվորների աշխատանքից:

Բանվորները աշխատում են իրանց համար կես որ
միայն, իսկ մյուս կիսում, նրանք աշխատում են գործա-
րանատիրոջ համար:

Բանվորներն իրանց կյանքի կեսը աշխատում են
իրանց համար, իրանց ընտանիքի ու հարազատների հա-
մար, իսկ կյանքի մյուս կեսը տալիս են գործարանատի-
րոջը, վոր նա կարողանա յեկամուտ ստանալ իր բամբա-
կից, կարողանա հավելյալ արժեք ունենալ:

Այն, ինչ մենք ասացինք մի բամբակի գործարանա-
տիրոջ մասին, կարելի յե ասել աշխարհիս բոլոր վար-
պետների ու գործարանատերերի մասին:

Նրանք բոլորն ել աշխատավորներ են գնում, բանվոր
ուժ են գնում միայն նրա համար, վոր ոգուտ ունենան
նրանց աշխատանքից, վորպեսզի ստիպեն նրանց ավելի
յերկար աշխատել, քան հարկավոր ե:

IV.

Դուք, իհարկե, կհամաձայնեք այն բոլորին, ինչ պատ-
մեցի յես ձեզ: Միայն մի բան կարող եք դուք առարկել,
թե վերցրածս բամբակի գործարանի որինակը այնքան
ել ճշմարտանման չե: Վորտեղ, և յերը և լսված, վոր
մեքենաները 80 ռուբլի արժենան, կամ բամբակը միայն 1400
ռուբլի արժենա: Այդ միանգամայն ճիշտ ե: Այս որինակի մեջ
բերած թվերը ընտրված են միայն նրա համար, վոր ավելի
ճիշտ պարզվի հավելյալ արժեքը: Այժմ յես ձեզ կըբերեմ
կյանքից վերցրած մի որինակ, ուր թվերը այնքան ճիշտ
կըլինեն, վոր վոչ վոր չի կարող առարկել նրանց դեմ:

Անգլիայում, ինչպես յուրուաքանչյուրին հայտնի յե,
մեծ քանակությամբ բամբակ ե մշակվում: Հնուց արդեն
այստեղ գոյություն ունեն հակայական շոգեշարժ գոր-

ծարաններ, վաղուց այնտեղ բանվորները դադարել են իրանց համար աշխատելուց և ծախում են իրանց աշխատանքը, դառնալով սովորական վարձու բանվորներ, վաղուց ե ինչ նրանք և սոված են և կարիքների մեջ են: Սակայն դրանից հարստանում են գործարանատերերը:

Հիմա, դիցուք, մի այդպիսի գործարանատեր իր բամբակի գործարանը պահել և ընդհանրապես ամբողջ արտադրության՝ վրա ծախսել ե տարեկան $134,250$ ռուբլի: Իսկ տարին լրանալուց հետո ծախսել ե իր մանվածքը ու դրա համար ստացել $159,000$ ռուբլի: Ուրեմն նա $24,750$ ռուբլի յեկամուտ ե ստացել՝ ($159,000 - 134,250 = 24,750$ կամ 18%): Դուք զիտեք, ինարկե, վոր դա գեռ շատ ել մեծ ոգուտ չե, քանի վոր մեղանում գործարաններ կան. որինակ շաքարի գործարանը, վորը տալիս ե 40, 50 տոկոսից ավելի ոգուտ: Տեսնենք, վորտեղից մեր գործարանատերը ստացավ այդ ոգուտը: Ավելի պարզ լինելու համար, հաշվենք, թե ինչքան ե նա ծախսում էր արտադրության վրա մի շաբաթվա մեջ:

Նրա գործարանում աշխատում ե 10,000 իլիկ, գորոնք պատվում են շոգու ողնությամբ: Մի իլիկը (ինարկե, բանվորի ողնությամբ) կարող ե տալ շաբաթը մի ֆունտ մանվածք: $10,000$ իլիկն ուրեմն գործարանում պարաստում են շաբաթական $10,000$ ֆունտ մանվածք: Բայց վորպեսզի $10,000$ ֆունտ մանվածք պատրաստի, պիտի գնել $10,000$ ֆունտից ավելի բամբակ, քանի վոր աշխատանքի ժամանակ մի մասը, իբրև տականք, դեն ե ձգվում: Մեր գործարանում պիտի գնել $10,600$ ֆունտ բամբակ, քանի վոր 600 ֆունտը փշանալու յե աշխատանքի ժամանակ, բամբակի ֆունտը Անգլիայում 1871 թվին արժեր 19 ռլ կես կոպեկ, հետեւապես $10,600$ ֆունտ բամբակ գնելու համար, պիտի վճարելին $10,600$ անգամ ավելի, այսինքն՝ 2067 ռուբլի:

Վորպեսզի այդ բամբակից մանվածք ստացվի, պետք

են մեքենաներ, ոժանդակիչ նյութեր և բանվորական աշխատանք: Մեքենաները, այսինքն՝ իլիկները շոքեմեքենայի հետ միասին արժեն $60,000$ ռուբլի: Բայց մի անգամ գնված մեքենաները չեն մաշվում միանգամմաց, այլ կարող են ծառայել մի 10 տարի: Այդ պատճառով ել մեքենաների տարեկան ծախսը կըլինի վոչ թե $60,000$ ռուբլի, այլ 10 անգամ պակաս, այսինքն՝ 6000 ռուբլի, իսկ շաբաթական ծախսը (յեթե տարվա մեջ ընդունենք 50 բանվորական շաբաթ) կըլինի 50 անգամ պակաս, այսինքն՝ 120 ռուբլի: Այսուհետև մեքենաների համար պետք ե քարածուխ (կաթսաները տաքացնելու համար), յուղ (անիվները յուղելու), գաղ (գործարանը լուսավորելու համար) և այլն: Ածուխի համար մեր գործարանում շաբաթական ծախսուխի համար մեր գործարանում շաբաթական ծախսը՝ բամբակի, մեքենաների, քարածուխի, գաղի, յուղի, շենքի և այլ կարիքների համար հավասար ե 2278 ռ. 20 կոպեկի: Սակայն այս ամբողջ նյութը վոչինչ չի տա, յեթե դրան ըմիացնեն բանվորական ձեռք:

Այդ պատճառով գործարանատերը վարձում ե 135 բանվոր (նրանցից ամեն մեկը հսկում ե 74 իլիկի աշխատանքին) և գնարում ե նրանց իրանց բանվորական ուժի համար այնքան, վորքան պետք ե այդ ուժն արտադրելու համար կամ ուրիշ խոսքով աշխատավորի ապրուստի համար (նրա սննդի, հագուստի և բնակարանի համար). Պիցուկ, շաբաթական պետք ե 2 ռուբ. 25 կոպեկ: Պիցուկի շաբաթական մի շաբաթում կվճարի 303 ռ. 75 կ. յեթե բանվորներն աշխատելին միայն իրանց համար, այսինքն յեթե գործարանատիրոջը տային այնքան, վորքան նրանք ստացել ելին նրանից, վորպես աշխատավորքան ժամանակ շատ հեշտ կլիներ հաշվելը, թե վորքան կարժենա մի շաբաթվա ընթացքում նրանց պատրաստած $10,000$ ֆութ մանվածքը: Յեկ իսկապես, այդ մաստած

վածքի մեջ պիտի լինի՝ 1) բամբակի գինը—2067 ռ., 2) մեքենաների արժեքը—120 ռ., 3) ածուխի գինը—24 ռ. 60 կ., 4) յուղի գինը—24 ռ. 60 կ., 5) դաղի գինը—6 ռ., 6) բնակարանի վարձը—36 ռ., 7) բանվորների աշխատավարձը—303 ռ. 75 կ. բոլորը միասին 2581 ռուբ. 95 կ., իսկ մի գրվանքա մանվածքը կարծենա 10,000 անգամ պակաս կամ մոտավորապես 26 կոպ.:

Մինչդեռ մեր գործարանատերը մի գրվանքա մանվածքի համար ստացավ վոչ թե 26 կ., այլ $31\frac{5}{8}$ կոպեկ, իսկ 10,000 գրվանքի համար 3162 ռուբի 50 կ. այսինքն՝ 575 ռուբով ավելի, (3162 ռ. 50 կ.—2587 ռ. 50 կ.=575 ռուբի) քան մեր հաշվով եր ստացվել:

Յեթե մեր գործարանատերը 575 ռուբին ավել ստացավ, պարզ է, այդ նրանից եր, վոր նրանց մեջ պարունակում ե մի նոր արժեք, վորն առաջ չկար և վորն ավելացրին բանվորները իրանց սեփական չվճարված աշխատանքով: Ուրեմն, մենք տեսնում ենք, վոր 575 ռուբլու յկամուտը գոյացավ չվճարված աշխատանքից, բանվորների ստեղծած հավելյալ արժեքից:

Այդ բանվորները գործարանատիրոջից ստացան 303 ռ. 75 կ. նրանց մի շաբաթվա աշխատանքի համար, իսկ մի շաբաթում նրանք վոչ միայն այդ վարձի չափ աշխատեցին, այլև բամբակի արժեքին ավելացրին 575 ռուբլու չվարձատրված աշխատանք: Նրանցից յուրաքանչյուրն որպական ստանում ե $37\frac{1}{2}$ կոպեկ և վոչ միայն վերադարձնում ե այդ փողը, ավելացնելով բամբակի արժեքը, այլև նրան մի նոր արժեք ե ավելացնում (հավելյալ արժեք) $58\frac{1}{2}$ կոպեկ: Հետևապես, չվարձատրված աշխատանքը մեկ ու կես անգամ ավելի յե, քան վարձատրածը. բանվորը մեկ ու կես անգամ ավելի յե աշխատում գործարանատիրոջ համար, քան թե իրա համար:

Հավելյալ արժեքը ավելի քան մեկ ու կես անգամ շատ ե վարձատրված աշխատանքից, կամ, ինչպես ա-

սում են, հավելյալ արժեքի չափը մեկ ու կես ե, կամ 150 տոկոս ե*):

Այժմ արդեն, կարծես, մեզ համար պարզ է, վոր անխափի բոլոր յեկամուտներն ել սեփական աշխատանքից չեն: Մենք, գոնե, տեսանք, վոր գործարանատերն, իր յեշեն: Մենք, գոնե, տեսանք, վոր գործարանատերն, իր յեշեն: Մենք, գոնե, տեսանք, վոր գործարանատերն, իր յեշեն: Մենք, գոնե, տեսանք, վոր գործարանատերն, իր յեշեն:

Իսկ համար վարպետները, կալվածատերերը, ա-

տիճանավորները, վաճառականները և այն, ինչ կարելի տիճանավորները, վաճառականները և այն, ինչ կարելի տիճանավորները, մասնաւոր յեկամուտների մասեն: Մկնենք վարպետներից:

Դուք, իհարկե, գիտեք, վոր կոշկեղենի մեծ մասը մեղանում պատրաստվում ե մասնավոր արհեստանոցներում, ուր վարպետը հսկում ե աշխատանքը, քարգյահներն աշխատում են վարձով, իսկ աշակենաները ձրի: Վարպետը, վահնվում ե աշակերտի աշխատանքից և նրանից ոգուտ ե ստանում, դրա մասին գիտեն վորը յերեխաներն անգամ: Այստեղ մենք խոսում ենք քարգյահների մասին: Դուք գիտեք, թե վորքան ծանր ե կոշկակարի աշխատանքը, իր աթոռի վրա կուցած, մութ սենյակի խեղդող ոգում: Նա պիտի աշխատի 15, 16 ժամ, վորպեսզի կարողանա իր գոյությունը պահպանել: Նա բանում ե հատով. ամեն մի զույգ կոշկեկի համար նրան վճարում են 90 կոպեկ: Լավ պայմաններում՝ լավ քարգյահը 15 ժամվա մեջ կարող ե պատրաստել յերկու զույգ կոշկեկ և իր աշխատանքի համար կատանա 1 ռ. 80 կ.: Տեսնենք այժմ, արդյոք, վորտեղից ե վերցնում վարպետն իր ոգուտը:

*) Հավելյալ արժեքի չափը, ուրեմն, վարձատրված յեկ չվարձատրված աշխատանքների միջեղ յեղած հարաբերությունն ե: Այսպիս յեթե բանվորն աշխատում ե իր համար 4 ժամ, իսկ կալվածատիրոջի համար՝ 8 ժամ, ուրեմն չվարձատրված աշխատանքը 2 անգամ ավելի յե, բան վարձատրածը յեկ հավելյալ արժեքի չափը=2 կամ 200% , Եթեր նա աշխատում ե 6 ժամ իրան համար յեկ 6 ժամ՝ կալվածատիրոջի հավելյալ արժեքի չափը հավասար ե 1 կամ 100 տոկոսի:

Մի զույգ կոշիկի յերեսի ու տակի կաշին, ու
տինը՝ արժե 2 ռ. 10 կոպեկից մինչև 2 ռ. 55 կ., մնա-
ցած նյութը (թել, ասեղը, մեխերը և այլն) 10 կ., ար-
հեստանոցի քրեհը, ասենք՝ 10 կոպեկ*), քարգյահին 90 կ.:
Յեթե մեր քարգյահը միայն իր աշխատանքի համար ստա-
նար, այն ժամանակ՝ մի զույգ կոշիկի դինը պիտի պա-
րունակեր իր մեջ՝ նյութի արժեքը՝ (կաշին, ուետինը տա-
կի կաշին՝ ներբանը) 2 ռուբլի 55 կոպ., մնացած նյութը
10 կ., շենքի քրեհը՝ 10 կոպ., քարգյահի աշխատանքի ար-
ժեքը՝ 90 կոպ., այնպես վոր կոշիկները պիտի արժենային
3 ռ., 65 կոպ.: Մինչդեռ վարպետը մի զույգ կոշիկը ծա-
խում է 5 ռուբլով, այսիրքն 1 ռ. 35 կ. թանգ:

Վորտեղից առաջացավ հապա այդ 1 ո. 35 կ.: Պարզ է, վոր դա չկար, վոչ կաշու մեջ, վոչ մեխերի և վոչ ելքունի մեջ. այդ նոր արժեքը կարող ելին ստեղծել մի-այն բանվորները:

Այդպես ուրեմն, մեր քարգյահը ստացավ 90 կոպեկ, բայց վարչետի համար ավելացրեց 1 ռուբլի 35 կոպեկ չը վարձատրած աշխատանք, այսինքն հավելարժեք, վորով ոգտվում ե, ինարկե, միայն վարպետը: Դարձյալ, ուրեմն, չըվարձատրած աշխատանքը մեկ ու կես անգամ ավելի յե վարձատրածից, դարձյալ հավելյալ արժեքի չափը $1\frac{1}{2}$ ե կամ 150 տոկոս: Բանվորը ուրական 15 ժամվա աշխատանքից՝ իր համար աշխատում ե միայն 5 ժամ, իսկ 10 ժամ տալիս ե վարպետին, հարըստացնելով նրան,

Այժմ, դուք տեսնում եք, թե ինչպես ե ստանում վարպետը իր ոգութը։ Սեփական աշխատանքնվ։ Պարզ ե, վոր վոչ։ Ճիշտ այնպես, ինչպես դործարանատերերը։ Նա

^{*)} Ի՞նաբեկն արմեստանցի քրեհն ավելի թանգ արժե, զուցե 9 ուռվի, զուցե 15 ո. յիվ զեր ավելի. բայց այդ արմեստանցում պատրաստված են վոչ թե մի զույգ կոշիկ, այլ ամսական 50, 100 զույգ յիվ ավելի, դրա համար ամեն մի զույգ կոշիկին գալիս ե անհամեմատ ավելի քիչ, յենթադրենք 10 կոպեկ.

կարող ե հարստանալ միայն ուրիշ աշխատանքով, միայն իր բանվորների ու վարպետների աշխատանքով:

V

Իսկ վաճառականները, կալվածատերերեւ, աստիճանավորները և այլն:

Հիմա դրանց ել կըհասնենք։ Յեվ վորպեսզի պար-
դենք, թե վորտեղից են ստանում նրանք իրանց ոգուտը.
բերենք մի որինակ։

Յենթադրենք, վորևե մի գործարանատեր իր ձեռնարկության մեջ զնում է 150,000 ռուբլի։ Իսչ ձեռնարկություն և այդ մեզ համար միենույնն է, ասենք դիցուկ ճականդեղա - շաքարի*) գործարան է։ Մեր գործարանատերը գնել է մեքենաները, ճականդեղը և այլ անհրաժեշտ նյութեր, վարձել է բանվորներ և տարին վերջանալուց հետո, նա շաքարի համար ստանում է 195,000 ռուբլի։ Այդպիսով գործարանատերը ստանում է 45,000 ռ. յեկամուտ իր 150,000 ռ., կապիտալից (Դրամագլուխ)։ Մենք արդեն գիտենք, վոր այդ 45,000 ռուբլին բանվորների չվճարած աշխատանքի գինն է, կամ հավելյալ արժեքն է։ Գործարանատերը ուրախությամբ իրա մոտ կը պահեր այս ամբողջ յեկամուտը, թեև նա դրա վրա աշխատանք չի գործադրել բայց ինչքան ել վոր մինի փողերից բաժանվելն այնուամենայնիվ դժվար բան է։

Բայց «հավելյալ արժեքը» ստանալու ուղիւ
շատ սիրահարներ կան: Ամեն մեկը կուզենար ինչ-
քան չկինի մի բան ել իր գրպահնը գձել: Բոլորից
առաջ իր ձեռքն ե մեկնում վաճառականը: Գոր-
ծարանատերն առանց վաճառականի բան չի կարող
անել, քանի վոր նա զիտե, վոր իր ապրանքից
վոչ մի ոգուտ չի ստանա, քանի դեռ այդ ապրանքը

Վան. բարգմ.

Մեր գործարանատիրոջը մնաց ոգուտից միայն 34,500 ռուբլի: Բայց նա դեռ հիմա ել չի կարող ամբողջ փողը եր գրպանը դնել:

Մենք արդեն ասացինք, վոր իր գործարանի համար նա ծախսեց 150,000 ռուբլի: Այդ 150,000 ռուբլին կառող ե նրա սեփական փողը լինել բայց և կարող ե, վոր ծախողը նրան դիջի մի քանի տոկոս:

Գործարանատերը դրան չհամաձայնել չի կարող: Նա դիջում ե, ասենք մանեթից 10 կոպեկ, և ծախում ե իր շաքարը վոչ թե 195,000 ռուբ. այլ 187,500 ռուբլու: Գործարանատիրոջ ոգուտը պակսեց, նրա մի մասը վաճառականի գրպանը մտավ, բայց դրա փոփարեն գործարանատիրոջ գրպանում այժմ զուտ փող ե գտնվում: Վաճառականը այդպիսով ստանում ե 7500 ռուբլի:

Ինչպես ստացավ նա այդ ոգուտը: Մեփական աշխատանքնից: Հասկանալի յե, վոր վոչ: Նրա ոգուտը գործարանատիրոջ ոգուտի մի մասն ե միայն, ուստի և նա միայն բանվորների չվճարած աշխատանքի մի մասն ե: Վաճառականն ել, ուրեմն, իրան պահում ե ուրիշի աշխատանքով՝ գործարանի բանվորների աշխատանքով:

Վաճառականից հետո գալիս ե կալվածատերը: Մեր գործարանատերն իր գործարանը շինել եր կալվածատիրոջ հողի վրա: Պատահում ե, ինարկե, վոր գործարանները շինում են սեփական հողի վրա, բայց ավելի հաճախ շինում են ուրիշի հողի վրա: Հողատերը դրա համար ուզում ե վարձ ստանալ՝ այսպես անվանված ունտա (գրամական հասույթ): Ինչ արած, մտածում ե գործարանատերը, ուղում են, պիտի տաս: Յեվտալիս ե իր յեկամուտից 3,000 ռ. քրեն (ունտա): Այդպես ուրեմն, վճրտեղից ե հողատերը ստանում իր ոգուտը. պարզ ե, վոր գործարանատիրոջ նույն յեկամուտից, հետևապես, դարձյալ գործարանային բանվորների չվճարված աշխատանքից*):

Այդպիսով ուրեմն, գործարանատիրոջ մոտ մնաց 25,500 ռուբլի, բայց դեռ այդ մնացորդն ել նա չի կարող ծախսել իր հայեցողությամբ: Կառավարությունն ել ե կամենում բաժին ստանալ այդ գումարից:

Ամենից շատ հարկ վճարում են իրենք՝ չքավորները, բանվորները: Բայց հարկերի մի մասն ընկնում ե գործարանատերի ու կալվածատիրոջի վրա: Յեվ մեր գործարանատերը մի փոքր բաժին ե հանում պետությանն իր ոգութից: Նա, իբրև հարկ, վճարում ե յենթագրենք 500 ռ. կամ անունը իր անունությունը: Խսկ այն հողատերը, վարը ինքն ե կառավարում իր անունությունը, դարձյալ իրան պահում ե բանվորների աշխատանքով, այսինքն վարձու աշխատավորների՝ հերկողների յել այլ աշխատանքով,

իր պահեստում ընկած կլինի. առաջ պիտի ապրանքը ծախել, փողի վերածել և միայն այն ժամանակ կարելի յե ասել, վոր գործն արված ե: Հարկավոր ե ուրեմն փնտրել մի վաճառական, վորպեսզի ապրանքը վաճառի սրան:

Գալիս ե վաճառականը, նա պատրաստ ե ապրանքը գնել, բայց այն պայմանով, վոր ծախողը նրան դիջի մի քանի տոկոս:

Գործարանատերը դրան չհամաձայնել չի կարող: Նա դիջում ե, ասենք մանեթից 10 կոպեկ, և ծախում ե իր շաքարը վոչ թե 195,000 ռուբ. այլ 187,500 ռուբլու: Գործարանատիրոջ ոգուտը պակսեց, նրա մի մասը վաճառականի գրպանը մտավ, բայց դրա փոփարեն գործարանատիրոջ գրպանում այժմ զուտ փող ե գտնվում: Վաճառականը այդպիսով ստանում ե 7500 ռուբլի:

Ինչպես ստացավ նա այդ ոգուտը: Մեփական աշխատանքնից: Հասկանալի յե, վոր վոչ: Նրա ոգուտը գործարանատիրոջ ոգուտի մի մասն ե միայն, ուստի և նա միայն բանվորների չվճարած աշխատանքի մի մասն ե: Վաճառականն ել, ուրեմն, իրան պահում ե ուրիշի աշխատանքով՝ գործարանի բանվորների աշխատանքով:

Վաճառականից հետո գալիս ե կալվածատերը: Մեր գործարանատերն իր գործարանը շինել եր կալվածատիրոջ հողի վրա: Պատահում ե, ինարկե, վոր գործարանները շինում են սեփական հողի վրա, բայց ավելի հաճախ շինում են ուրիշի հողի վրա: Հողատերը դրա համար ուզում ե վարձ ստանալ՝ այսպես անվանված ունտա (գրամական հասույթ): Ինչ արած, մտածում ե գործարանատերը, ուղում են, պիտի տաս: Յեվտալիս ե իր յեկամուտից 3,000 ռ. քրեն (ունտա): Այդպես ուրեմն, վճրտեղից ե հողատերը ստանում իր ոգուտը. պարզ ե, վոր գործարանատիրոջ նույն յեկամուտից, հետևապես, դարձյալ գործարանային բանվորների չվճարված աշխատանքից*):

*) Մենք այստեղ խոսում ենք այնպիսի հողատիրոջ մասին, վորն ինքը

Դժվար չե հասկանալ, վոր այդ հարկը նույնպես վճարել են բանվորները, քանի վոր վոչ մի գործարանատեր ինքը վոշինչ չունի, այլ բաժանում ե միայն հավելյալ արժեքը՝ աշխատավորի չվճարած աշխատանքը:

Մեր գործանատիրոջը մնում ե ելլ 25,000 ռ., դրանից նա 750 ոռութիւ տալիս ե գործարանի տեսչի ոռոճիկը, 1500 ոռութիւ ապահովագրական ընկերությանը և 2250 ոռութիւ ձեռնարկության այլ ծախսերին։ Մնում ե 20,500 ոռութիւ զուտ ոգուտ, վորն արդեն գործարանատերը կարող ե ինչպես ուզենա այնպես ել ծախսել։ Յեվ ամբողջ աշխարհը պիտի ասի, վոր այդ 20,500 ոռութիւն նրա ռափականությունն» ե, վորը նա ձեռք ե բերել «սեփական աշխատանքով»։

VI.

Այժմ արդեն մենք կարող ենք լրիվ պատասխան տալ մեր գրքույկի սկզբում դրած հարցին։ Ով ինչնի ե ապրում։ Ո՞վ իր աշխատանքով ե ապրում և ով ուրիշի։ Ով ինչնի ե իրան պահում՝ իր սեփական, թէ ուրիշի ձեռքի աշխատանքով։ Այժմ արդեն մենք կարող ենք բոլոր մարդկանց յերեք կարգի բաժանել։ Առաջին կարգին պատկանում են այն մարդիկ, վորոնք աշխատում են իրանց համար և իրանց սեփական աշխատանքով են պահում իրանց։ Դրանց թվին են պատկանում բոլոր այն արհեստագորները, վորոնք սեփական գործիքներ ունեն և բոլոր այն գյուղացիք, վորոնք այնքան հող ունեն, վոր կարող են ապրել սեփական աշխատանքով։

Յերկրորդ կարգը՝ դա այն բանվորներն են, վորոնք սեփական գործիքներ չունեն և այն գյուղացիները, վորոնք կամ շատ քիչ հող ունեն, կամ բոլորովին հող չունեն, և վորոնք պիտի իրանց ծախսեն, այսինքն՝ ծախսեն իրանց բանվորական ուժը։ Մենք այդ կարող կավելյալ արժեքը, չի կարող հարստանալ ուրիշի ինքնի հավելյալ արժեքը։ Եթե կարող պահել իրան ուրիշի աշխատանքով։ չի կարող պահել իրան ուրիշի աշխա-

քարգյահներին, գործարանային ու գյուղատնտեսական վարձու բանվորներին և այն։

Իսկ յերրորդ կարգը կազմում են նրանք, ովքեր ուսնեն արտադրության գործիքներ, բայց իրանք չեն աշխատում, այլ ստիպում են ուրիշներին աշխատել։ Այդ դասին են պատկանում գործարանատերերը, վարպետները, կալվածատերերն և այն։

Մենք արդեն տեսանք մեր գրքույկի առաջին կիսում, թե ինչպես են այժմյան կարգերը. մի խումբ մարդիկ ապրում են ուրիշի աշխատանքի հաշվին։ Բայց ինչու յեւ այդպես վորովհետև ժողովրդի մեծ մասը ազատ չե, վորովհետև նա ստիպված ե ծախել իր բանվորական ուժը, ծախել իրան։

Բայց ինչու յեւ նա ստիպված ծախել իրան։ Վորովհետև նա չունի աշխատանքի գործիքներ։ Մենք արդեն տեսանք, վոր նա, ով աշխատանքի գործիքներ չունի, պիտի ծախել իրան, հակառակ գեպօւմ նա կըմեռնի քաղցից։ Հետեւապես, յեթե ուզում ենք շտկել, լավացնել փոխել ներկա կարգը, յեթե ուզում ենք վերացնել մեկի կարիքը և մյուսի շուայլությունը, ապա ինչ պիտի առաջիք է, այսպես պիտի անենք, վոր ամեն մեկն ել ունենա աշխատանքի իր սեփական գործիքները։ Այն ժամանակ ամեն մեկն ել իր համար կաշխատի։ Վոչ վոր ուրիշի համար չի աշխատի, վոչ վոք չի տա իր աշխատանքից հավելյալ արժեք։ Այն ժամանակ, վոչ վոք մարդկանց չի գնի, չի առնի նրանց բանվորական ուժը։ Եթե հավելյալ արժեքը, չի կարող հարստանալ ուրիշի ինքնի հավելյալ արժեքը։ Եթե կարող պահել իրան ուրիշի աշխատանքով։ չի կարող պահել իրան ուրիշի աշխա-

տանքով։ — Այնպես անել, վոր ամեն մեկն աշխատանքի գործիքներ ունենա, բայց ինչպես այդ անել։ Կասեք դուք ինձ, Բանն ել հենց դրա մեջն եւ։

Ինչպես անել։ Խել աշխատանքի գործիքները նրան-

ցից, ում մոտ, վոր նրանցից շատ կան, և տալ աշխատավորներին՝ ոգտավելու համար:

—Խլել ուժնվ... վճնց թե խլել. ինչ խաբար ե... Միթե դա կարելի յե: Միթե հնարավոր բան ե: Միթե դա բարոյական բան ե:

Դա, հնարավոր ե թե վոչ, խելացի բան ե թե բարոյական—ահա յերեք հարց, վորսնց կաշխատենք պատասխան տալ:

VII.

Ամենից առաջ տեսնենք հնարավոր ե այդ: Հնարավոր ե արդյոք, վոր յուրաքանչյուր աշխատավոր, իր աշխատանքի գործիքներն ունենաւ:

Դա այնքան ել հասարակ հարց չե, ինչպես կարող եր թվալ: Սակայն առաջին հայացքից թվում ե, թե դա այնքան ել գժվար բան չե: Զե վոր յեղել ե ժամանակ, յերբ գրեթե ամեն մի աշխատավոր ունեցել ե իր սեփական արհեստանոցը, վորտեղ ինքն ե յեղել տերը:

Հնումը, ճիշտ վոր այդպես եր: Բայց այն ժամանակ աշխարհում համեմատաբար քիչ մարդ կար, Այն քաղաքում, վորտեղ սրանից 200 տարի առաջ 500 հազար բնակիչ կար, այժմ 8 միլիոն ե (Լոնդոնում՝ Անգլիա): Այն յերկում, ուր 2—3 հարյուր տարի սրանից առաջ 2 միլիոն ժողովուրդ կար, այժմ կարող ե 10 միլիոնից ել ավել ժողովուրդ ունենալ: Ուստի, առաջ, յերբ բոլորին 1000 զույգ կոշիկ կրավականացներ, այժմ միլիոն զույգ ե պետք: Ուր առաջ բանեցնում եյին մեկ միլիոն արշին քաթան, այժմ պետք կլինի 10—20 անգամ ավելի: Հետեւաբար հնումը, «անցած, գնացած լավ որերին», — թեև այդ որերը այնքան ել լավ չեն, վոր նրանց վերադը մենք կամենանք, — մի ջուրհակը, վորն աշխատում եր իր կնոջ ու յերեխաների հետ իր արհեստանոցում, կամ մի փականագործ, վորը փականներ եր շինում իր

տանը՝ չեյին կարող մեծ քանակությամբ վոչ քաթան գործել և վոչ ել փականներ շինել: Նրանք քիչ եյին աշխատում, քանի վոր պահանջն ել շատ քիչ եր: Ջուրհակը իր քաթանը գործում եր վատ դադդահի վրա, փականագործը իր փականները շինում եր վատ գործիքներով:

Այժմ ջուրհակը իր քաթանը գործում ե անպատճառ մեքենաների ոգնությամբ: Յեթե նա կամենար իր քաթանը գործել առաջվա նման՝ դադդահի վրա, դա միենույն բանը կըլիներ, վոր մեկը ցանկանար ձիով գնալ այստեղ, ուր յերկաթուղի յե գնում: Նա գուցե 100 ժամ վատեղ, այս բանի վրա, վորը մեքենայի ոգնությամբ, կկարողանար շինել մի ժամվա ընթացքում:

Ներկայումս մթերքի շատ մեծ պահանջ կա, չարկավոր են մեծ գործարաններ, շոգեմեքենաներ, մեծ խավոր սեղանակի, միայն Անգլիայում 450,087 բան-Ներկայումս, որինակ, միայն Անգլիայում 33 միլիոն իլիկների վրա: Վոր բամբակից թել են մանում 33 միլիոն իլիկների վրա: Յեկ յեթե ամեն մի աշխատավոր ունենա իր արհեստանոցը, իր իլիկը, այսինքն, յեթե ամեն մեկն ինքնուրույն աշխատավոր դառնա, այն ժամանակ բոլորը միասին չեյին կարող կատարել նրա քսանյերուրդ մասը, ինչ կատարվում է այժմ: Ամեն տեղ բամբակի գործվածքների մեծ կարիք կզգացվեր և, նույնիսկ, մեր գեղջկուհիները կզանգատ այդպիսի կարողություն ունենալ: Դուք տեսնում եք այժմ, վեյին այդպիսի կարողություն: Դուք տեսնում եք այժմ, վոր այնքան ել հեշտ չե և միշտ ել հնարավոր չե, վոր այն ժամանակ արհեստանոցը, կամ աշխատանամեն մեկն իր սեփական արհեստանոցը, ձիշտ ե, չեր լինիքի իր սեփական գործիքներն ունենա: Ձիշտ ե, չեր լինիքի բանվորների ճնշում, բայց դրա փոխարեն ամենանհարաբան կորների ճնշում, վատ դրա փոխարեն ամենանհարաբան կորների ճնշում, ու սովոր կլիներ:

Այս, սովոր կլիներ, այդ բանում հիմա դուք ինքներդ կհամոզվեք: Ներկայումս Անգլիայում, որինակ, համարյական ողջ վերաբերյալ աշխատանքի սեփական գործիքները բանվոր չկա, վոր իր աշխատանքի սեփական հողը մշակող գյուներն ունենա: Իսկ իրանց սեփական հողը մշակող գյուներն ունենա: Այստեղ կան միայն խոշոր զացիներ հո՛ բոլորովին չկան, Այստեղ կան միայն խոշոր

հողատերեր, վորոնք մեծ կալվածքներ ունեն, շոգեշարժ գութաններ, շողեմեցենաններ՝ հնձելու և կալսելու համար, վորոնք և վարձում են գյուղական աշխատավորներին իրանց հողերը մշակելու համար:

Իսկ գյուղական աշխատավորները վոչինչ չունեն, վոչ արտ, վոչ գործիքներ և վոչ նույնիսկ խրճիթ. Նրանք, ուրեմն, իրանց պիտի ծախեն, տերերին ճորտ դառնան և նրանց հանձնեն իրենց հավելյալ աշխատանքը:

Այդպիսի աշխատավորների դրությունը վատ է, շատ վատ: Անսասելի սարսափ և պատկերացնում անգլիական հողատերերի աղահությունը, յերբ գրքերում կարդում եւ անգլիական գյուղական աշխատավորների սարսափելի վատ դրության նկարագրությունը:

Բայց ինչ եք կարծում, յեթե նրանցից ամեն մեկին արված լիներ մի առանձին կտոր հող: Դրանից կշահվեր անգլիական ամբողջ ժողովուրդը: Ամենին: 1875 թվին Անգլիան իրան բավարարելու համար պետք ուներ 22 միլիոն կվարտեր հացի (մեկ կվարտերը = 1¹/₂ չետվերտի): Անգլիական հողի վրա բունում եր միայն 13 միլիոն կվարտեր հաց, այսպես վոր 9 միլիոնը պիտի բերվեր արտաահմանից: Յեթե միայն հողը բաժանվեր մանր հողամասերի, վորոնց վրա հնարավոր չլիներ բանեցնել շոգեշարժ գութաններ, ցանող, հնձող կամ մաքրող մեքենաներ, այն ժամանակ վոչ միայն 13 միլիոն կվարտեր հաց չեր հավաքի, այլ գուցե, չհավաքվեր նույնիսկ 5, 6 միլիոն: Այդ գեղքում Անգլիայում սով կնկներ:

Տեսնում եք, ուրեմն, վոր ներկայումս չի կարելի, վոր ամեն մարդ ունենա իր աշխատանքի սեփական գործիքները:

Հապա ինչպես անել: Աշխատանքի իր սեփական գործիքները չունենալը վատ է, վորովհետեւ այդ դեպքում ստիպված ես ծախել քո բանվորական ույժը, ծախել քեզ՝ հարատացնել ուրիշներին: Ունենալ այդ գործիքները նույնպես վատ է, քանի վոր այն ժամանակ անհրաժեշտ մըթերք-

ների կարիք ու սով լվինի: Ի՞նչ անել ուր և յելքը, վորտեղ գտնել:

Յելք կա. և շատ ել լավը եւ ինչու հետագայում ել այնպես չանել, ինչպես հիմա յե, վորտեղ աշխատավորներն աշխատում են միասին՝ մեծ գործարաններում ու մեծ հողամասերի վրա, թող հետագայում ել նրանք մարանները ամբողջությամբ պատկանեն բանվորներին ծրագաններ ամբողջությամբ պատկանեն բանվորներին և վոչ թե նրանցից մեկին, այլ պատկանի բոլորին: Թող գործարաններն ու հողերը պատկանեն բոլոր բանվորներին, բոլոր գյուղացիներին, բող գու նրանց բնդիանուր սեփականությունը (ինք*) թող նրանք միասին աշխատեն, բայց աշխատեն վոչ թե գործարանատիրոջ, այլ իրանց համար, Այն ժամանակ նրանք պակաս չեն աշխատի, քան այժմ, այլ նույնիսկ կաշխատեն շատ ավելի. ամեն մեկը կդիմանա, վոր աշխատում ե վոչ թե գործարանատիրոջ համար, այլ իր բոլոր ընկերների համար, վորոնք նույնպես նրա համար են աշխատում: Այն ժամանակ աշխատավորը կիրականա, վոր յեթե նա ավելի մնա գործարանում և աշխատի ավելի յերկար, քան հարկավոր ե—հավելյալ աշխատանքը, հավելյալ արժեքը՝ կապականի բոլորին և վոչ թե կիրաստացնի մի բուռ մարդկանց, այլ կբարելավիք բոլորի ու ամեն մեկի վիճակը:

Այսպես ուրեմն, բանվորներին ոգնել կարող ե միայն հողի ու գործարանի հասարակական սեփականություն դառնալը:

VIII.

Իսկ այժմ, հարց տանք մեզ՝ արդյոք այդ կհաջողվի: Կարելի յե հուսալ, վոր հողի և աշխատանքի գործիքների այդ ընդհանուր սեփականությունը իսկապես կիրազործվի: այդ հարավագները ե, վոր ամեն մեկն իր սեփական գլխի տերը հնարավոր ե, վոր ամեն մեկն իր սեփական գլխի տերը

*) Այսինքն պետական:

լինի։ Միշտ ել յեղել են հարուստներ ու աղքատներ։ Միշտ
ել և ամեն տեղ յեղել են մեծ քանակությամբ ձնշվողներ
և մի բուռն ձնշողներ։ Միշտ ել մարդիկ են յեղել, վորոնք
այդպիսի կարգն անարդար են անվանել, բայց և այնպես
վոչինչ չի ոգնել. միշտ ել աղքատների բանը վատ և յե-
ղել, հարուստներինը՝ լավ։

Իսկ այժմ, արդյոք աղքատների թիվը ավելի ու ավելի չի աճում, արդյոք սոսկալի չքափորությունը չի տարածվում աշխարհիս բոլոր բանփորների վրա:

Այդ բոլորն ել ճիշտ ե, շատ ճիշտ ե, բայց և այնպես ու չի կարող մեղ զրկել հույսից: Ընդհակառակը, դրանից մենք պիտի հասկանանք, վոր համենայն դեմքս կզացանկալի ապագան: Ահա թե բանն ինչումն ե:

Զքավորների թիվը, վորոնք վոչ մի սեփականություն չունեն, շարունակ ավելանում ե և պիտի ավելանա: Դրա դեմ՝ այժմյան հանգամանքներում, վոչինչ չես կարող անել: Արհեստավորը, շուկա ուղարկելով իր ապրանքը, ցանկանում է նրա համար ստանալ վորքան կարելի յե շատ ոգուտ, և դրա մեջ զարմանալու վոչինչ չկա. Նա՝ նրա վրա ուժերը ներածին չափ աշխատանք ե գործ դրել: Բայց ինչ ոգուտ նրան այդ աշխատանքից: Գործարանատերը, վորը նույն ապրանքն ե պատրաստում գործարանում, նրա վրա շատ ավելի քիչ աշխատանք ե գործ գնում: Յեթե յենթագրենք, վոր փականագործը իր փականի վրա կչարչարվի յերեք ժամ. նույն ձեռի փականը գործարանում կշինեն մի ժամվա մեջ, կամ դեռ ավելի պակաս: Փականագործը կուզենա իր փականի համար վերցնել 30 կոպեկ (յեթե աշխատանքի ժամը՝ տասը կոպեկ արժե), գործարանատերը կծախսի 10 կոպեկով: Ի-հարկե, վոչ վոք չի առնի փականագործից, և սա չկարողանալով ծախսել իր ապրանքը՝ կծախսի իր դադահը և կգնա գործարանատիրոջ մոտ ու կվաճառի իր բանմորական ուժու:

Ինչ ասվեց փականագործի մասին, նոյնը կարելի յէ ասել մնացած բոլոր արհեստագործերի մասին: Մերենա-

ների և գործարանների հետ նըանք մըցել չեն կարող և,
վաղ թե ուշ, պիտի գնան վարձու բանվոր լինեն: Այդպի-
սով ավելի ու ավելի մեծ թվով մարդիկ կորցնում են
իրենց ազատությունը և ճարահատյալ ծախում իրենց բան-
վորական ուժը: Յեթե բանվորները գոնե ունենային ի-
րենց անփոփոխ աշխատավարձը, վորի վրա նըանք կարո-
ղանային հույս գնել դարձյալ կարելի յեր մի կերպ յուա-
գնալ: Բայց իզուր: Բանվորների աշխատավարձը, ընդհա-
կառակը, շարունակ կրծատվում է, մինչդեռ գործարանա-
տիրոջ ոգուաբար՝ որեցոք ավելանում:

տրիում սկսաւը սկսցու է և այդ ավելի պարզ կերպով բացարել։ Հր-
շենք, թե վորտեղից ե ստացվում գործարանատիրոջ ոգու-
տը։ Բանվորը նրան ե տալիս իր հավելյալ աշխատանքը,
վորովհետեւ որվա միայն մի մասն ե բանվորն իրան հա-
մար աշխատում, իսկ մնացած մասը՝ նա աշխատում ե գոր-
ծարանատիրոջ համար։ Յեթե, որինակ գործարանա-
տերը 20 բանվոր ե պահում, վճարելով նրանց ամեն մե-
կն որական 90 կոպեկ, վճարում ե արդքան նրա համար,
վորովհետեւ ճիշտ այդքան ե հարկավոր նրանց գոյությունը
պահպանելու համար (կերակրի, հագուստի, բնակարանի)։
Բանվորները վեց ժամյա աշխատանքից հետո, արդեն այդ
փողի չափ աշխատում են, իսկ որվա մնացած մասը
նրանք տալիս են գործարանատիրոջը ձրի։ Որական նոր
արժեքի 90 կոպեկը վերցնում ե գործարանատերը (յեթե
ընդունենք, վոր աշխատավորը որեկան 12 ժամ ե աշխա-
տում)։ Յեկ յեթե նրանք 30 հոգի յեն և աշխատում են
333 որ տարեկան, ուրեմն մի տարում իրենց տիրոջը նրանք
6,000 ռ. ոգուտ են տալիս ($20 \times 90 \times 333$)։ Պարզ ե, վոր
քանի շատ են իրանց աշխատանքից տալիս բանվորները,
այնքան շատ ոգուտ կունենա գործարանատերը, այնպես
վոր յեթե փոխանակ 6 ժամվա, որական նրանք տալին 8
ժամ, այն ժամանակ գործարանատիրոջ յեկամուտը կիներ
վոյ թե 6,000, այլ 7,200 ռուբլի։

Ներկայումն հենց այդպիս ել կա - բանվորներն ստուգ

ված են գործարանատիրոջը տալ իրանց բանվորական որ
վա մեծ մասը:

Վեհական թե: Շատ պարզ է: Խոչնույթը մեր այս որինակում բանվորը որական 90 կ. ստանում: Վորովհետեւ այդքան է պետք նրա կյանքը պահպանելու համար (կերակրի հագուստի, բնակարանի): Աշխատելով 6 ժամ վարձով բանվորը որվա մնացած մասը (այսինքն 6 ժամը) ձրի յեւ աշխատում:

Յեթե այսպես լիներ, վոր բանվորների կերակրվելու
կամ ընդհանրապես ապրուստի համար 6 ժամվա-
րեն բավական լիներ աշխատանքի 4 ժամը, այն ժամա-
նակ աշխատավարձը արդեն կլիներ վոչ թե 90 կոպ., այլ
միայն 60 կոպեկ, բանվորն այդ դեպքում իրան համար
կաշխատեր 4 ժամ, իսկ մեացած 8 ժամը կաշխատեր գոր-
ծարանատիրոջ ողտին, տալով նրան իր ամբողջ հավելյալ
աշխատանքը, ամբողջ հավելյալ արժեքը:

Հենց այդպես ել իսկապես լինում եւ Բայց քանի
վոր ամեն տեղ մեքենաներ են մացվում, վորոնցով ա-
վելի հեշտ ե պատրաստել ամեն մի առարկա. ուստի և այն
բոլոր առարկաները պատրաստելու համար, վորոնց կա-
րեքն ե զգում բանվորը, ավելի ու ավելի քիչ աշխատանք
ե պահանջում. Առաջ շապիկ կարելլ 2—3 որվա աշ-
խատանք եր պահանջում, այժմ՝ միայն մեկ որ, գեռ
դրանից ել քիչ. Առաջ մի վորոն բաճկոն կարելլ 10 որվա
աշխատանք եր պահանջում, իսկ այժմ նույնիսկ յերեք
որից ել քիչ:

Հետևաբար, ներկայումս աշխատավորն այլևս իր աշխատավարձի համար չպիտի այնքան յերկար աշխատի (իրան համար), վորքան առաջ: Առաջ նա պիտի իրան համար աշխատեր 6 ժամ այն դեպքում, յեթե այժմ բավական ե չորս ժամը: Բայց դրանից նրան ոգուտ չկա: Առաջ 12 ժամվա աշխատանքից նա իրան համար եր աշխատում 6 ժամ, իսկ մնացած 6 ժամը դործարանատիրոջն եր տալիս, իսկ այժմ նրան հերիք ե 4 ժամը, իսկ

մնացած 8 ժամը, հետևապես, մնում է գործարանատիրոջը: Բանվորն աշխատում է առաջվա չափ, շահվում եմ միայն գործարանատերը: Առաջ, բանվորն աշխատում եր 6 ժամ իրան համար, իսկ մնացած 6 ժամը գործադրում եր հավելյալ արժեք ստեղծելու համար, այդ հավելյալ արժեքի չափը (այսինքն վարձատրված ու չվարձատրված աշխատանքների տարբերությունը) հավասար եր մեկի կամ 100% , — այժմ բանվորին անհրաժեշտ աշխատանքը՝ շարունակում ե 4 ժամ, հավելյալ աշխատանքը՝ 8 ժամ և վերջնիս չափն ե 2 կամ 200% : Այժմ ամեն տեղ, արդյունաբերության բոլոր ճյուղերում մեքենաներ են մըտցըվում: Աշխատանքը դբանցով ավելի հաջող ե առաջնում: Ուստի և այն ժամանակը, վորը պետք է բանվորին իր ապրուստի համար աշխատելու, ավելի յե կըսճատվում, իսկ այն ժամանակը, վորը գործարանատիրոջն եքածին ընկնում, ավելի յե յերկարում: Հավելյալ արժեքի չափն ել շարունակ աճում ե:

Այժմ, մենք տեսնում ենք, թե ինչու բարդ է ու
պիտի աղքատանան, իսկ գործարանատերելը՝ հարստանան:

«Զկա չարիք, առանց բարիքը»
Այդպես ել հավելյալ արժեքի շարունակաբար աճման մեջ
լով բան շատ կա: Բոլորից առաջ լավ ե այն, վոր բան-
վորը հիմա քիչ աշխատելով պիտի կարողանա իրան պա-
հել: Ուժմ, յերբ ամբողջ աշխատենք զործարանաթիրոջն ե տալիս,
բանվորը դրանից քիչ ե շահվում, բայց ժամանակին ան-
հրաժեշտ աշխատանքի այդ պակասելը շատ կարեոր կլի-
նի նրա համար:

Բայցի գըանից, յես այսաւեղ պլոտի հրշու մաս ով բառ,
վորի մասին մինչև այժմ, վոչինչ չեմ ասել: Ինչ եք կար-
ծում, արդո՞ք բոլոր զործարանատերերը հարստանում են
ուրիշ աշխատանքով: Ի հարկե վոչ: Բոլորն ել հա-

բըստանալ չեն կարող. Նրանցից ամեն մեկն աշխատում է սնանկացնել մյուսին: Մեկն աշխատում է ծախելու համար վորքան կարելի յե շատ ապրանք՝ որինակ, չիթ պատրաստել, մի ուրիշը այդ ապրանքից ավելի շատ պատրաստում եռղարկում է ծախելու, մի յերբորդը առաջին յերկուսից ել շատ և ուղարկում և նրանցից ամեն մեկը պիտի աշխատի, վորքան կարող ե եժան ծախի իր ապրանքը, յեթե չի ուղում, վոր այդ ապրանքը մնա իր վրա: Վերջապես, այդ չթից շուկա յե բերգում այնքան շատ, վոր առնող ել չի լինում, իսկ գործարանատերը, յեթե առնող չունենա, կարող ե կտոր ընկնել: Միայն շատ հարուստները կարող են այնքան սպասել, վոր պահանջ լինի իրանց ապրանքին, վորպեսզի նորից շարունակեն իրենց գործը, իսկ պակաս հարուստները կոտր են ընկնում՝ քայքայելով իրանց մոտ աշխատող բանվորներին, վորոնց թողնում են առանց մի պատառ հացի: Յեվ այդ կրկնվում է յուրաքանչյուր 8—10 տարին մի անգամ: Ամեն մի 8—10 տարի ահագին քանակությամբ մանր գործարանատերեր են վոչնչանում, փողոց են շպրտվում բազմաթիվ բանվորներ, իսկ հաբստանում են միայն մի քանի խոշոր գործարանատերեր:

Սրանից ի՞նչ ե հետևում։
Շատ բան։ Քանի գնում, այնքան գործարանատերերի ու հարուստների թիվը պակասում է, իսկ աղքատների՝ բանվորների թիվը ավելի ու ավելի շատանում։ Հարստությունները հավաքվում են ավելի ու ավելի քիչ մարդկանց ձեռքում, իսկ չքավորությունը տարածվում է ժողովրդի ավելի մեծ մասի մեջ։

Բանվորները տեմում են, վոր գործարանատերերի
թիվը պակասում է, թեև նրանց հարստությունը շարու-
նակ աճում է, այնպես, վոր գործարանատերերը շահվում
են հարստության մեջ, բայց կորցնում են իրենց ուժը:
Իսկ գործարանների բանվորները սովորում են միասին
աշխատել. նրանք սեփական աչքերով տեսնում են, թե

վորքան ձեռնուու յե միասին աշխատելը, քանի վոր այդ
դեպքում թե ժամանակն ե պահպանվում և թե ավելի լավ
տեսակի ու վորակի ապրանքներ են շնորհում: Իսկ միեւ-
նույն ժամանակ նրանք տեսնում են սեփական աշքերով
թե վորչափ վատ ե, յերբ աշխատանքի բոլոր գործիքները
պատկանում են մեկին, և վոր այդ մեկը վոչ միայն ին-
քը չի աշխատում, այլ և հաճախ գաղափար ել չունի, թե
ինչպես ե պատրաստվում իր գործարանում այս կամ այն
ապրանքը:

Դրա հետ միաժամանակ բանվորները գործարանում սովորում են իրար պաշտպանել, նրանք տեսնում են, վոր բանվորը բանվորի համար յեղայր է, վոր նրանք բոլորն ել մի ընդհանուր թշնամի ունեն, վորն իրանց աշխատանքովն ե ապրում, և վոր նրան հաղթելու համար հարկա- վոր ե միանալ և ոգնել միմիանց:

ի հարկե, շատ բանվորների մեջ սրբք ո օագուած լ-
ինչու ենք մենք ուրիշի համար աշխատում: Զե վոր
մենք այնքան շատ ենք, իսկ նա մենակ ե. մենք աշխա-
տում ենք մեզ համար, իսկ նա խլում ե մեր աշխատան-
քը: Յեթե միայն գործարանները մերը լինեցին, այդ դեպ-
քում ամեն ինչ այլ կերպ կը լիներ. մենք ոգուտի յետե-
փեց չելինք ընկնի, այլ միայն կը մտածեինք մեր գոյու-
թյունը պահպանելու մասին,

Մենք կախում ենք բոլորի ոգտի համար, իսկ առ միայն իրան համար և աշխատում ի վեստ ուղիներին:

Իսչու ըոլոր բանվորները խոսք մեկ չասմ և
այժման տերերից շխեն հողս ու գործարանները:

բայց այս առաջին աշխարհացի կամ եղած աշխարհացի կամ եղած

Հայց արդյունքում է համար, այլ ակնոցն և աչքերին Աչքերը շեն ակնոցի համար:

Մարդիկ նրա համար չեն ապրում աշխարհում, վոր վորքան կարելի յե շատ ապրանք արտադրեն, այլ ապ- րանքները աշխարհում նրա համար են, վորպեսզի մար- դիկ իրանց կարիքները հոգան, Բանվորներն են մթերք

ստեղծում, նրանք ել պիտի ոգտվեն այդ մթերքից, իսկ
այդ բանի համար, նրանց պետք են աշխատանքի գործիք
ներ:

IX.

Այժմ, մնում ե ամենից խոշոր հարցը. ի՞նչ ձեռք
խլել հողերն ու գործարանները, ի՞նչպես համել այդ
բանին:

Դա արդեն ձեր գործն ե: Դրա վրա դուք պետի մի
փոքր մտածեք: Յերբ հին ժամանակներում հարց եր ծա-
գում յերկիրը թշնամու ձեռքից ազատելու մասին, յերբ
հարկավոր եր լինում յերկրից վոնտել թշնամուն, այն
ժամանակ ձեզ եյին դիմում, բանվորներիդ և այն ժա-
մանակ դուք կարող եյիք հարցնել. «մենք պատրաստ ենք
յերկիրն ազատել, թշնամուն հեռացնել՝ բայց ի՞նչպես ա-
նել այդ»:

Այժմ միայն խոսքը ձեր մասին ե, ձեր ընտանիքնե-
րի, ձեր յեղբայրների մասին, իսկ իր սեփական գործը
մարդ ինքը պիտի կարողանա անել:



ՀԱՎԵԼՎԱԾ

Ամեն մի առարկայի արժեք վորոշվում ե այն աշ-
խատանքի չափով, վորը գործադրված ե յեղել այն առար-
կան պատրաստելու համար: Դա ընդունված ե բոլոր գիտ-
կանականների կողմից: Բայց այն մարդու զիսում, վորը
ծանոթ չե գիտության, կարող ե մի այսպիսի միտք ծա-
գել. յեթե ամեն մի առարկայի արժեք այնքան անդամ
ավելի յե, վորքան շատ աշխատանք ե գործ դրված այն
պատրաստելու վրա, ուրեմն մի անշնորք ու վատ կոշկա-
կար, վորն իր պատրաստած կոշիկների վրա ավելի շատ
ե չարչարվել, քան պետք ե՝ պիտի ավելի շատ ստանա,
քան մի փորձված վարպետ, վորը թե լավ ե աշխատում և թե
արագ: Բայց, իհարկե, նման դատողությունը սիալ ե:

Գիտությունը խոսում ե վոչ թե աշխատանքի և ժա-
մանակի ավելորդ վատնման մասին, վորը բանվորի ան-
շնորքությունից ե առաջանում: Այդ ավելորդ աշխատան-
քըն անողուա աշխատանք ե, վոր իգուր տեղն ե վատ-
նված, միայն բանվորի ապիկարության պատճառով: Գիտու-
թյունը անհրաժեշտ աշխատանքի մասին ե խոսում, այն
աշխատանքի, վոր առանց նրան չի կարելի յոլա գնալ:
Բայց այդ անհրաժեշտ աշխատանքն ել ամեն անգամ մեկ
չի լինում: Բոլորին ել հայտնի յե, վոր կարի մեքենայով
ավելի արագ կարելի յե կարել, քան թե առանց այդ մե-
քենայի: Քանի գեռ կարի մեքենա չկար, շատիկ կարելու
համար անհրաժեշտ աշխատանքը միջակ (այսինքն՝ վոչ
լավ և վոչ վատ) կար անող կնոջ աշխատանքն եր, վոր
բանում եր ասեղի ոգնությամբ, իսկ յերբ դատան կարի

մեքենան, այն ժամանակ շապիկ կարելու համար անհրաժեշտ աշխատանքը պակասեց, քանի վոր շապիկը մեքենայով ավելի արագ կարելի յէ կարել: Այն կար անողը վորը մեքենա չունի, իհարկե առաջի պես ավելի յերկար պիտի աշխատի շապիկ: վրա, բայց այժմ արդեն նրա աշխատանքի մի մասն այլևս անհրաժեշտ չի համարվի: Վեր մասն ե այն: Ահա թե վոր. յեթե մեքենայով կարելի յէ յերեք անգամ ավելի արագ կարել, քան առանց մեքենայի՝ միայն մի յերրորդ մասը կը լինի անհրաժեշտ աշխատանք: Դիցուք, նա մի շապիկ վրա աշխատեց վեց ժամիսկ մեքենայի վրա կարելի յէ այդ շապիկը կարել յերկու ժամում: Այդ դեպքում մեր կար անողի վեց ժամվա աշխատանքը հավասար կը լինի միայն անհրաժեշտ աշխատանքի յերկու ժամում: Ահա թե ինչու դործի մեջ մեքենա մացնելը միշտ ել քանզում ե ձեռքի դործիքներով աշխատող արհեստավորների տունը:

Բայց սա դեռ վերջը չե: Վորպեսզի իմ աշխատանքն անհրաժեշտ աշխատանք լինի, իմ պատրաստած ապրանքը պիտի հարկավոր լինի հասարակությանը, կամ, ինչպես զիտնականներն են ասում, պիտի պահանջ լինի: Վերցը նենք նենց որինակ մանվածքային գործը: Քաթանն ու զանազան գործվածքներն, իհարկե, պետք են հասարակությանը. դա մի այնպիսի ապրանք ե, առանց վոր կարող են յոլա գնալ միայն վայրենիները: Ուստի քաթանի պահանջ կա, ջուրհակի աշխատանքն անհրաժեշտ աշխատանք ե: Բայց այստեղ ել ամեն բան նրանից ե կախված, թե ջուրհակը մեքենայի վրա յէ աշխատում, թե ձեռքի գազգահի վրա: Ներկայումս անհրաժեշտ աշխատանք ե համարվում ջուրհակի միայն այն աշխատանքը, վորը պետք ե մեքենայի վրա գործելու համար: Այս ավելորդ աշխատանքը, վորը պետք ե ձեռքի գազգահի համար արդեն անհրաժեշտ չի համարվում: Այդ ե պատճառը, վոր հիմա այնքան ծանր գիճակի մեջ են մեր անայնադորդ ջուրհակները:

Բայց յենթադրենք, վոր պետք ե տասը հաղար արշն քաթան, իսկ գործեցին քսան հազար: Բանից գուրս ե գալիս, վոր յերկու անգամ ավելի քաթան են պատրաստել, քան հարկավոր եր, ուրեմն յերկու անգամ ավելի ավելորդ գործ գրվեց, քան հարկավոր եր: Ավելորդ աշխատանքն արդեն անհրաժեշտ աշխատանք չե: Յեթե գործած քաթանի կեսը առանց կարիքի յեր պատրաստված, ուստի և այն աշխատանքը, վորը գործ եր դրված վարդ կեսի վրա՝ ավելորդ աշխատանք ե և վոչ թե անհրաժեշտ: Յեթե նրանք, ովքեր պատրաստել են այդ քաթանը (իրանք բանվորները կամ տերերը) միանգամից ծախեն այդ բոլոր քաթանը, այն ժամանակ քաթանի գինն յերկու անգամ ավելի պակաս կլինի, քան պիտի լիներ իսկապես: Նրանցից ամեն մեկը վնաս կկրի, նրանցից ամեն մեկը կտեսնի, վոր իր աշխատանքի կեսը գուր ե փըշացըեր, վոր իր աշխատանքը միայն կիսով չափ եր անհրաժեշտ աշխատանք: Իսկ յեթե քաթան պատրաստողներից կեսին մի համբռով կհաջողվի իր ապրանքն ավելի շուտ շուկա հանել, այն ժամանակ, գուցե, այդ կեսին հաջողվի ծախելու իր ապրանքը համաձայն նրա վրա գործ պրած աշխատանքի: Բայց այդ դեպքում քաթան պատրաստողների մյուս կեսը բոլորովին առնող չի գործ դրված: Բայց նրանց կարող ե փրկել միայն նրանց ապրանքի եժանությունը: Ահա թե ինչպես: Տեսնելով, վոր իրենց ապրանքին բոլորվին պահանջ չկա, նրանք պիտի աշխատեն, ինչպես ասում են, առնողներին զրավեն՝ ավելի ու ավելի պակասեցնելով ապրանքի գինը: Այն ժամանակ, մարդկանցից շատերը, վորոնք իրանց չքափորության պատճառով չելին կարողացել քաթան առնել, յերբ նա իսկական գնովն եր ծախզում, այժմ կառնեն շատ եժան գնով:

Բացի զրանից, ունեվոր մարդկանցից շատերը, եժա նությունից զբավկելով, կառնեն պահելու համար։ Դր չնորհիվ, մեր ուշացած քաթանավաճառները իրանց և ար տաղբության ծախսերի» մի վորոշ մասը կվերադարձնեն Սակայն առանց վնասի, և այն ել մեծ վնասի՝ գործը վկու չի դա։

Բայց ով ցանկություն ունի վնասի համար, կամ ձր աշխատել։ Տեսնելով, վոր քաթանի պահանջը ընկել ե, քա թան պատրաստողները կաշխատեն ավելի քիչ քաթան պատրաստել։ Այն ժամանակ նրա գինը բարձրանում ե Յեթե այս անգամ ճիշտ այնքան քաթան պատրաստեն վորքան հարկավոր ե, նրանց գործադրած ամբոքջ աշխա տանքն անհրաժեշտ աշխատանք կլինի։ Իսկ յեթե պա հանջվածից ավելի քիչ քաթան պատրաստեն, այն ժամա նակ նրա գինն ել ավելի կրաքարանա, այնպես վոր ար տաղբողները ավելի կստանան, քան պետք ե։ Այն ժամա նակ վնասի փոխարեն նրանք մեծ ոգուաներ կստանան։ Բայց մեծ ոգուա ստանալ ցանկացողները շատ կան։ Առաջ կդան քաթան պատրաստաողներից ուրիշները։ Նրանք նույնպես շուկա կհանեն իրանց ապրանքը։ Այն ժամանակ գինը նույնպես կնկնի և այլն։

Քաթանի գնի այս տատանումները մեզ բերում են այն հետևանքին, վոր յեթե մենք վերցնելու լինենք վո թե մի տարի և մի դեպք, այլ շուկայում քաթանի ծախ վելու շատ տարիներ և շատ դեպքեր, այն ժամանակ կը տեսնենք, վոր նրա արժեքը վորոշվում ե աշխատանք այն քանակով, վորն անհրաժեշտ ե նրան պատրաստելու համար։

Նույնը կարելի յե ասել նաև ամեն մի ուրիշ ապ րանքի մասին։

Հարկավոր ե միայն հիշել, վոր մի վորես առաջկ պատրաստելու համար՝ գործադրվող աշխատանքի քանակի տակ, չի կարելի հասկանալ միայն մի վորես արհետի բանվորի աշխատանք։ Այսպես, որինակ. կողպերի մեջ կը

վոչ միայն փականագործի աշխատանքը, այլև յերկաթա հանքում աշխատող հանքափորի, հանքը ձուլողի, յերկաթը պատրաստողի, նրան փոխադրողի և ուրիշ շատ տեսակի աշխատավորների աշխատանք։ Այդ բոլոր բանվորները նր պատակ են յեթե վոչ այդ նույն կողպերը պատրաստե լուն, գոնե աշխատել են նրա համար անհրաժեշտ նյութի վրա։ Ուստի կողպերի արժեքը վորոշելու համար, պետք ե այդ բոլոր բանվորների աշխատանքը հաշվի առնել։ Նույնպես յերբ մենք նույն կողպերի աշխատանքը կարող մեքենա յով և առանց մեքենայի կար անողների աշխատանքները, մենք պետք ե հիշենք հետեւյալը։

Կարի մեքենան անգամ պատրաստված ե բանվորների աշխատանքով։ Ուստի և նա նույնութեա արժեք ունի։ Այդ արժեքը պակասու՞ և մեքենան բանեցնելուց բանեցը մեքենան ավելի եժան ե, քան թե նորը։ Բայց այն ար ժեքը, վորը կորցը և մեքենան անցել ե նրա ոզնու ժեքը, վորը կորցը կարած իրերի վրա։ Յեշ գա հասկանալի յե, կա թյամբ կարած իրերի վրա։ Այս հասկանալի յե, կա րի մեքենայով կարած շապիկը պարունակում է իր մեջ, իմիջի այլոց, մեքենան պատրաստող բանվորների աշխա տանքը։ Ուրեմն, յեթե բոլորովին ճիշտ ասած լինենք, ա ռանց մեքենայի կար անողի վեց ժամվա աշխատանքը չի հավասարվի, ինչպես մենք ասացինք, 2 ժամվա անհրա ժեշտ աշխատանքի։ Առանց մեքենայի աշխատելով նա իր կարած շապիկի վրա չի անց կացնում այն արժեքը, վորը կորցնում է մեքենան գործադրվելուց, Ուստի նա թեև յե կամ շատ անգամ դանդաղ ե աշխատում, քան մեքենայի վրա, բեք անգամ դանդաղ ե աշխատում, արդեն վոչ թե յերկու, այլ, ասենք, ժիշտ աշխատանքի արդեն վոչ թե յերկու, այլ, ասենք, 2 մի քառորդ կամ 2 և կես ժամին։ Ինքնըսանիքյան 2 մի քառորդ կամ 2 և կես ժամին։ Ինքնըսանիքյան 2 մի քառորդ կամ 2 և կես ժամին։ Ինքնըսանիքյան 2 մի քառորդ կամ 2 և կես ժամին։ Ինքնըսանիքյան 2 մի քառորդ կամ 2 և կես ժամին։ Ա. ՄՊՎԵՆՑԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0192676

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական գրականության սերիա

1. Կ. Մարքս—Գաղըճու աշխատանք ու կապիտալ
թարգմ. Ստ. Շահումյանի (72 էջ)՝ լույս 1921 թ. Յերևանում. գինը — լ. 15 կ.
2. Կ. Տօպովիլ—Հարկավոր և արդյոք բանվորներին ու գյուղացիներին սեփական զորք և ինչու համար, թարգմ. Նարգիտյանի (24 էջ), 1922 թ. Յերևան (սպառված). « — լ. 10 կ.
3. Ա. Միսանիլյան—Մեր քաղաքականության ու հերթական խնդիրները (15 էջ), 1922 թ. Յերևան « — լ. 5 կ.
4. Կ. Լինին—Պարենհարկի մասին, թարգմ. Թ. Ա. (64 էջ), 1922 թ. Յերևան « — լ. 15 կ.
5. Միխ. Կորեվ—Բերքի սակավությունն և սովորականություն, թարգմ. Կ. Հ., 1922, Յերևան « — լ. 5 կ.
6. Կ. Մարքս յիշ Փ. Ենգելս—Կոմմունիստական Մանիքնութ, թարգմ. Պ. Մակինցյանի (79 էջ) 1922 թ. Յերևան « — լ. 40 կ.
7. Կ. Խաղեկ—Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա տեղը պատմության մեջ, թարգմ. Կ. Հ. (22 էջ), 1922 թ. Յերևան « — լ. 5 կ.
8. Վ. Թիառյանիկի—Պայքար աշխարհի բարիքների համար, թարգմ. Կ. Հ. (12 էջ), 1922 թ. Յերևան « — լ. 5 կ.
9. Վ. Մոսկվան—Սոցիալիստ հեղափոխականները Անդրկովկասում (29 էջ), 1922 թ. Յերևան « — լ. 15 կ.
10. Ա. Ցիլուլևիլու—Գրադարանագիտության այլբինարան, թարգմ. Յե. Թաղիանոսյանի (42 էջ) 1922 թ. Յերևան « — լ. 20 կ.
11. Քաղուախօրի առաջին համագումարը (72 էջ), 1923 թ. Յերևան « — լ. — կ.
12. Կ. Ռադիկ—Վ. Ի. Լինին (16 էջ), 1923 թ. Յերևան « — լ. 10 կ.
13. Կոմմունիստի առաջին այբբենարան (սպառ.) « — լ. — կ.

ԳԻՒԷ 20 ԿՈՊ.

Լույս տեսած գրքերը ծախվում են Պետրասովի բոլոր գրախանութներում: